ՀԵՆՐԻԿ
ՕՀԱՆՅԱՆ

ԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱԶԱՆՈՒՄ

Հենրիկ
Օհանյան

ԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՋԱՆՈՒՄ

(1997-1999)

Հրատարակչություն «Պրոզրես»
Մոսկվա-2010

ԴԱՐԱԾՆՈՒՆԴ

Սևեռված աչքեր համակարգերից,
Հղի դարասկիզբ մի չարածնունդ,
Մանուկը՝ խեղդող պորտալարում պիրկ
Մի մայր՝ ձեռքերը դեպ երկինք պարզած,
Աղոթքն է հնչում ծննդաբերման,
Մանկաբարձի ստվեր պարզ երկնայինու՞մ,
Թե՞ դատաստանի մթնդած աչքն է
Վերից վար նայում:

ԱՅՍՕՐ ԱՎԵԼԻ

Կյանքը հարբած է ահից դիվահար,
Ինչպես էն գլխից, այսօր՝ ավելի,
Մարդը մարդուց է խոցված ահահար,
Ինչպես էն դեպքից, այսօր՝ ավելի։

Սանձարձակ չարն է սուտ սիրախոսում,
Ինչպես էն խոսքից, այսօր՝ ավելի,
Ծանոթ դառնահեծ արցունքն է ծորում,
Ինչպես էն աչքից, այսօր՝ ավելի։

Թե պիտի մարդը համբերի անվերջ,
Ինչպես էն ցավին, այսօր՝ ավելի,
Պիտի ձեռքերը դեպ երկինք հառնի,
Ինչպես էն պահին, այսօր՝ ավելի։

Ու «փառքն» էր երեկ ցողում գարշահոտ,
Երեկ նողկանք էր, այսօր՝ ավելի,
Սուրբ դատաստանի նեղ օրերն են մոտ,
Ինչպես էն մեղքին, այսօր՝ ավելի։

ՍԹԱՓՈՒԹՅԱՆ ՃԻԳ

Անցյալի խորքից թախիծն է ծորում,
Շրջանցում ներկան, հասնում գալիքին.
Պայմանագիրն է մեջտեղ ողջունում
Առօրյա կյանքի ներկա սահմանին։

Որտե՞ղ են այսքան ծեսեր ու շփոթ,
Այդ ո՞ր աստղն է բողոքում վերից,
Թե «կռատունը» օջախս է մրոտ,
Հեռու եմ փախչում այս մաղձոտ դերից։

Ամեն մի հայացք՝ կործանման առիթ,
Ամեն մի հայացք՝ ավերածարավ,
Խառնաշփոթն է տիրել ամենուր,
Դարձել պատիրը համայնադավան։

Ուղղիր գթահայց խնդրանքդ վերև,
Փրկության դուռը ծեծիր հուսահատ,
Թե չէ վերջամոտ երախն է բացվել,
Օ՜, դու անզգույշ, անճար խնամարդ։

ՌԱԶՄԱՐՇԱՎ

Զինարշավը խենթ հողմերի նման
Սրբում-տանում է իր հետ ամեն բան,
Մրրիկի թևով շաչում է, ճչում,
Պարզում է դրոշ բացված դժոխքում,
Ու իր հետևից նյութում է դավեր,
Որ պիտի սփռի հրդեհ ու ավեր։
Ու սլանում է դեպի դարավերջ,
Վերջից եկողն է գոռում անընդմեջ.
–Ու՞մ պիտի հաղթեք, ձեր շարքին դասեք,
Դե քիչ դուք ձեզնով մեր լավն անտեսեք,
Թե պիտի ցանեք թույնը ձեր ներսի,
Կրեք դեպ աստղեր փութերով ոսկի.
Վերջից եկողն եմ ես ձեզ ընդառաջ,
Վշտամատյան է գրկիս ու հառաչ,
Ականատեսն եմ դիակույտերի,
Մարդկային անթիվ խեղված բախտերի.
Դե շուտ ձգեցեք սանձերը լքված,
Աշխարհը դեռ կա, քանզի կա Աստված։

ԾԱՆՐԱՔԱՅԼ ՊՏՈՒՅՏ

Շատ է ծանրացել երկրագունդը մեր,
Չի՛ հակաճառի Արքիմեդը ծեր,
Աշխարհը դարձել մի մեծ դեղատուն,
Չարյաց ելումուտ, մի դեսպանատուն,
Դեռ առանցքի շուրջ պտույտն է հաշվում,
Ճիշտ ժամանակին նոր տարի նշում,
Տանում է իր հետ ցավերի վարակ,
Պատերազմ, դավեր, սով, համաճարակ,
«Մարդու իրավունք» հավատքներ տարբեր,
Կուշտերի բանակ՝ սառը, անտարբեր.
Սողում են զինված շքերթներ անթիվ,
Սողում են դեպի երկուհազար թիվ,
Սողում են դեպի գաղտնախորհուրդը՝
Կարապ, խեցգետին, «գայլախլուրդը»:

ԴԱՐԱՄՈՒՏԻՆ

Բռնել են ազգերը մարաթոն
Դեպի մուտք քսանմեկերորդ դարի.
Հեռվից բարձրախոս պատեֆոն՝
Նշմարեք կարգախոսը մուտքի։

Իսկ այնտեղ գրված է՝ չծխել,
Չմտնել նեխած մտքերով,
Իսկ այնտեղ գրված է՝ չմտնել
Դահճի արյունոտ ձեռքերով։

Շեշտված է՝ տառեր, կանգնեցեք,
Կանգառ է վազող ազգերին,
Մուտքի դեմ պիտի խուզարկվեք,
Չունի տեղ այստեղ զազրելին։

ԸՆԴՎԶՈՒՄ

Մրցավազքն է ռազմարշավանք
Սպառնում այսօր մեզ վերից,
Սնախորհուրդ շահույթներն են
Շահում խաղը միշտ կողքից։

Ես էլ նորուս, նորն եմ ուզում,
Պինդ կառչել եմ ցուրտ կառքից.
Ու խորհում եմ՝ ի՜նչ են կորզում
Իշխանավոր ծեր փառքից։

Մեկը մեկով, մեկը՝ մեկին,
Ունայնամի՛տ, մեղսունակ,
Շտապում են վեր ատոմային
Մարտագլխով շարունակ։

Է՛յ, խրտնածներ, մի՛ քաշեք մեզ
Ձեր սին կամքի հետևից,
Ես օգտվում եմ մարդ կոչեցյալ
Իմ բուռ-բաժին վետոյից։

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԴԻՈՆ

Պարոնա՛յք, մի նոր վիրուս հայտնվեց
բոլորիս անհայտ,
մոտենում է մեզ՝
վա՛յ մեզ, վայ մեզ։

Երկնքում թե նոր մի ճեղք հայտնվեց,
Անտարկտիդան է
մատ թափ տալիս մեզ,
վա՛յ մեզ, վայ մեզ։

Թե անտառները կամաց վերանում
գիտցե՛ք՝ խմելու ջուրն է վերջանում,
շուտով վերևից հուր կթափվի
ձեզ,
վա՛յ մեզ, վայ մեզ։

Դու ժպիտ էիր, ռադիո հայկական,
այդ ո՞վ վարակեց իր մտքերով քեզ,
որ դարձար այդքան, այդքան
հոռետես,
վա՛յ մեզ, վայ մեզ։

ՀԵՌԱԿԱ ՀԱՅԱՑՔ

Հեռու-հեռվից՝ տիեզերքից,
Երկրագնդին եմ դիտակ,
Դեմս մի գունդ հրաշալից՝
Դեմս փոքրիկ մի գնդակ։

Այնտեղ մարդն է տիրակալ,
Ու՞մ է տիրում, բռնանում,
Այնտեղ դավն է երկրակալ,
Այնտեղ չարն է ավերում։

Դեմս փոքրիկ մի գնդակ,
Իր հետ խաղալ եմ ուզում,
Իսկ նա ինձնից նեղացած
Գլորվում է ուղեծրում։

ԻՐԱՐԱՆՑՈՒՄ

Զայրույթը այսօր շատրվանում վեր,
Մռնչում, երկնին դունչ է պարզում դեռ.
Ցավից ոռնացող գազանի նման,
Բողոքականի լեզվով անվարան
Վշտերն է հղում վայրի աշխարհի,
Արցունքն է թափում դեմքին ամպերի,
Թե՝ չարը ահեղ հողմերի նման
Ավեր է անում երկիրն աննման։
Գնդի շերտերն է անխիղճ ծվատում,
Մեղքերը նրա ուսերին բարձում,
Ցնցում մարդկային մտքի հիմքերը,
Անվավեր անում նրանց գործերը։
Ու հռհռում են վերից դևերը,
Ասում՝ այդ դու՞ք եք երկրի տերերը,
Օզոնի ճեղքը ձեր գլխին շաչի,
Բարձրացրեք դերը ձեր «Կարմիր խաչի»,
Համակերպվեցեք մութ ելումուտին,
Մրցանակներ կան պատրաստ՝ անգութին,
Ճանկռոտեք գիրկը իրարանցումի,
Մոռացեք լավը, պահ է անցումի...

Այսպես՝ շվարած նոր դարամուտին՝
Մարդիկ մարդկանց են հոշոտում դժնի,
Ու նվնվում են ազգերը բոլոր,
Հովիվը ննջել, ոչխարն է մոլոր։

ԱՇԽԱՐՀԻ ՏԵՆԴԸ

Ու երազիս մեջ խորհում եմ, զգում
Անչափ ծանրացած աշխարհի շունչը.
Տեսնում եմ նրան սարսափով համակ
Հիվանդ ու լքված մի մենաստանում՝
Զառանցանքի մեջ։
Ու տառապում եմ իր տառապանքով,
Կոպերն եմ բացում ու կրկին փակում,
Կրակ եմ դառնում սրտին՝ ջերմում է,
Սառնամանիք եմ դառնում՝ դողում է,
Իր վերքն եմ փնտրում բարությամբ համակ,
Մտատանջվում եմ,
Դառնում եմ փորձված մի աշխարհագետ
Ճանապարհվում եմ։
Ու ես տեսնում եմ վառ հորիզոնում
Երկնքին ձգվող հսկա ալիքներ,
Որ գալարվում են,
Ու հասկանում եմ,
Որ որպես գիտուն մի ճանապարհորդ՝
Հայտնաբերեցի մի նոր մայր ցամաք,
Որ տատանվում է։
Հեռվից տեսնելով ընթացքն իմ հանդարտ՝
Նա մոլեգնում է,
Անհույս ուժասպառ խորտակվողի պես
Ինձ հալածելով՝ ջղաձգվում է։
Ու հասկանում եմ,

Որ ես գտել եմ վերքն իմ աշխարհի,
Որ բաբախում է երկրաշարժերից,
Շտապ օգնություն անձայն աղերսող
Հայցվորի դերում։
Ու ալիքները շերտված, գազազած
Ճեղքում են անդեմ սարսափով համակ,
Այս իմ ահաբեկ հոգին ծանրացած,
Որ հալածանքից արդեն հևում է։
Խելառ շփոթից իմ մեջ սուզվում եմ։
Ու գոյատևման սահմանին հակված
Կյանքի այս թշվառ խեղդող պայմանից
Պահպանողական ներքին մի ճնշում
Ինձ հորդորում է։
Հույսի մի կտոր՝ համբերությամբ լի,
Ինձ փայփայում է,
Որ ես պայքարեմ
Հանուն որոնման ու ապաքինման
Աշխարհի հյուծված ախտահար մարմնի
Փրկության համար։
Եվ որպես գիտուն մի աշխարհագետ,
Չմոռանալով իղձն իմ հստակ,
Մի կերպ ձգվում եմ,
Ձուլվում ինքս ինձ։
Բայց սիրտս մի տես, տես, որ դողում է,
Ազդանշան է տալիս զգացումիս,
Որ սարսափում է։
Ու ալիքները,

Ճեղքելով հզոր պարիսպն իմ հոգու,
Գերում են սիրտս։
Ու ալիքներն այդ
Հիվանդ տիրոջ մեծ հույսին նվիրված
Այն ծառաներն են ցամաքից թռած,
Որ որպես նեցուկ ջանում են պոկել
Ու տանել սիրտս
Տապալվող Երկրի փրկության համար։
Ու այդ տանջանքում
Հանկարծ լսում եմ ձայն մի նրբերանգ,
Որ որպես խաղաղ մի կարգադրություն՝
Կանչում է նա ինձ,
Կանչում է՝ էյ, հե՜յ...
Լսիր դու բարի էակ մարմնային,
Ես տանում եմ քո սիրտը մարդկային՝
Կցելու հիվանդ սրտին հավիտյան,
Որպեսզի տերս՝ լցված նոր ուժով,
Քեզ կարգի տիպար մեծ անմահության։
Ու ես կծկվեցի։
Ձայնում է կրկին ի լուր հրաժեշտի,
Որպեսզի հանձնեմ
Սրտիս կապանքը բացող բանալին։
Ու պատկերելով ինձ առանց սրտի՝
Ես տապալվում եմ։
Մտքիս ակունքից ծնված մի հույսից
Անհույս կառչելով,
Պարտվող մի վախից անվերջ փախչելով՝
Լուռ տառապում եմ։

Ու ես լսում եմ նույն կանչը կրկին։

Ու կրկին անգամ նա ինձ ձայնելով,
Կամքիս տիրելով՝ սիրտս պոկում է,
Ու ես ճգնում եմ:
Մի վերջին ուժով ուժգին ճչում եմ՝
Էյ, հե՛յ, օգնեցեք...
Դուրս ելավ այնժամ իր դեմ պայքարի
Վախից նոր ծնված մի ուժ ահռելի՝
Անձնական կյանքիս «Մեծ թագաժառանգ»
Հարգարժան հերոս «եսս» զորավոր։
Այդ բախումներից, համազարկերից
Ահեղ ձայները ինձ խլացնում են։
Ու այդ իմ ես-ը, որպես մի փրկիչ,
Երբ պատկերվում է հաղթողի ոգով,
Ես սարսռում եմ,
Ձայրույթով լիքը կաշկանդ պայթյունից
Հանկարծ զարթնում եմ։
Տաքության մի շունչ ժամանակի մեջ
Ինձ հավաքում է.
Կրկին խորհում եմ,
Ինձ հասկանում եմ,
Որ որպես գիտուն մի ճանապարհորդ
Հայտնաբերեցի մի նոր գաղափար,
Որ մատուցում է հյուծված խոհերիս
Հզոր ու անպարտ վերքն իմ աշխարհի,
Ում որոնելով անչափ հոգնել եմ։
Բացառվող փաստի կրքոտ մտքերից

Անզուսպ մի շփոթ ինձ համակում է,
Ես խուսափում եմ։
Ամոթահարված ներքին ճնշումից՝
Ինձ նախատում եմ։
Ես ցնորվում եմ։
Փրկության ճիգի նեղ սահմաններից
Ծնված մի քաոս ինձ անտեսում է,

Ինձնից փախչում եմ։

1989թ.

ԱՐՄԱԳԵԴՈՆ

Խանձահամ դաշտեր՝ սարսռաբեր, սևացած,
Արևամուտ, մթին ամպեր՝ խավարապատ.
Ես իջել եմ վերից մի խանձված մոլորակ,
Չկա շունչ, չկա կյանք, չկա պատկերամարտ։

Եվ ո՞վ, ո՞վ կասի, որ այստեղ եղել է կյանք,
Եղել է այստեղ և՛ մարդ, և՛ ծաղիկ, և՛ բախտ,
Եվ ո՞վ կասի, որ այստեղ երգեր են ծնվել,
Եղել են հավատքներ, քաղաքներ բարեկարգ։

Այստեղ կանաչը չքնաղ դրախտ էր դարձրել,
Այստեղ արծիվն էր հպարտ-անպարտ թևածել,
Այստեղ մարդն իր դեմքն էր կերտում գործերում,
Այստեղ հավատն էր հրճվում իր երազներում։

Լռությունը մեռյալ անշարժությամբ փակված
Մտքերն են որոնում կյանք, ինքնամփոփ
խորհում,
Չորսկողմ ահազդու սառը խորհուրդը պատել,
Մտորում եմ՝ այստեղով նա է անցել։

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁԻ
ՀՈՒՅԶ

Պատկերացումի լայն տեսադաշտին
Ջութակահար է՝ ձայները ձեռքին.
Մեղմ նվագի տակ երկնքում ճախրում,
Բաբելոնի հին պատերն եմ նախշում,
Սլանում դեպի տիեզերքը ջինջ,
Ինձ համակում է թուլություն ու նինջ։
Կիսաբաց աչքով աստղերին հպվում
Առինքնող շնչին զգվում եմ, ձուլվում,
Իջնում եմ կրկին տունս կարոտած,
Տեսնում եմ նրան այնպես ծերացած,
Հուսալքում եմ նշմարում դեմքին,
Սով ու ախտերի կնճիռներ քունքին,
Տաքության շալքն է արգելք վայրէջքիս,
Շշուկ եմ լսում՝ «անառակ որդիս»
Հասել եմ մորս շնչահեղձ խոսքին՝
Լսիր, հիվանդ է չարքաշ իմ հոգին.
Կտակել է նա փորձում ուժեղին,
Բայց ու՞մ, այդ ես չեմ, է՜յ նվագածու,
Փոխեք նվագը ձեր այդ ծաղրածու։

ՉՓՈԽՎԱԾ ՊԱՏԿԵՐ

ԱԴԱՄԻՆ

Կոչվում էր նա մարդ, մարդ էր ժպտադեմ,
Մարդածին չէր նա, ոչ էլ մարդացեղ,
Նա ուներ լեզու, լեզու՝ անմեկին,
Ուներ մի դրախտ, ուներ նա մեկ կին։

Ուներ և հավատք, հավատ խորագետ,
Ու խոսքն էր իր մոտ, զրույց իր հոր հետ,
Տնօրեն էր մի՝ սուրբ, երևելի,
Կարգված էր իշխան կառավար երկրի։

Ափսո՜ս իր ցեղին՝ տարազգայնացվեց,
Ափսո՜ս իր խոսքին, որ բազմաձայնվեց,
Հավատքներ տարբեր՝ անթիվ, անհամար,
Ափսո՜ս՝ իր գահից եղավ գահընկեց։

ՄԱՐԴԸ

Եղբայրասպան էր, դարձավ ազգասպան,
Ապավինել է շինծու զենքերին,
Կամակատարն է, չարի պաշտպանը,
Ծափահարողն է արնոտ ձեռքերին։

Եվ սպառնացողն է, և՛ կատարողը,
Ու բռնացողը մեր ներկա դարի,
Որ չզայրանան հող, օդ ու ջուրը,
Քարշում է իր հետ մնացած բարին։

Ու թե ձախողվի դառնալ անարատ՝
Հանուն նախնական վեհ նպատակի,
Ուրեմն սա է դժոխքը հաստատ՝
Ցանկալի տեղը իր իսկ նմանի։

ԵՐԱՆԻ ՏԱՄ

Այդ որտե՞ղ են ծախում պատիվ,
Որ հասկանամ դերը փողի,
Այդ որտե՞ղ են պատերազմում,
Որ իմանամ գինը հողի,
Տեսնեմ սարսափ մարդակերին,
Անճար նայեմ վեր՝ հավքերին,
Որ հուսահատ տամ երանի
Տիրոջ որդուն լուռ սպասողին։

ՀՈՒՍՈ ԴՈՒՌ

Կլոր մի միտք, մի կարծիք,
Հարցի շուրջն է պտտվում,
Ճանապարհը դարձդարձիկ
Կրկին անհայտ է թվում։

Ջինավառված թեժ վազքում
Դեհ մի մրկեք էլ աչք-ունք,
Չէ, չի մնա կտակում
Ինչ-որ մեկին մի մասունք։

Գլորվում է տիեզերքում
Ու դառնում է մի կարծիք,
Գիշատչական ճանկերում
Կյանքի գունդը՝ մի կծիկ։

Խաղաղ կայքի խարխափում
Դեռ թրթիռն է թույլ լուսո,
Անուրջների աշխարհում
Բացում դռները հուսո։

ՇԱՀԱՐԿՈՒՄ

Դառնակաթիլը գրչահետքերով,
Ուղեծրով նախնյաց ապրելակերպի
Թերթում է դարեր, թերթում տարիներ,
Ասում իր խոսքը՝ գոհին մի սաստեք,
Կյանքից գոհ մարդուց դուք լավն սպասեք։
Օ՜, այստեղ կողմ չեմ ձեզ հետ, պարոնա՛յք,
Մինչև գոհանաս, քարը կխոսի,
Իմ դժգոհ սրտից բարին կհոսի,
Բարին էլ բացվում, հարցեր է դարսում,
Թե կցենք հաճո-ն հաճոյախոսին,
Հաճոյամոլի գարշահոտ կգա՞,
Տարբերենք հոգին հոգիանալուց,
Կեղծ հոգևորի հոգին կմոռա՞,
Թե որ օգուտը կտրենք օգտվելուց,
Մեղմ օգտաշահի միտքը կդողա՞,
Ծածուկն էլ ծածկ-ով թե որ մենք ծածկենք,
Ծածկաբար քայլքը պիտի՞ սողսողա։
Հարցերը դառնում հարցաքննություն,
Ու սերն է դառնում սիրաբանություն,
Ընկերությունը՝ ընկեր-վարություն,
Հասարակություն՝ հասարակ մի բույն,
Մարդ ու գիշատիչ հաճախ նույնանույն
Օրենք են դարձնում վարքը երկդիմի՝
«Մենք դեմ չենք չարին, մենք կողմ ենք
բարուն»–
Սա կարգախոսն է արատավորի...

Ու աշխարհիկն է զարմացել այսօր՝
Ու՞ր է ձեզ փրկող փրկիչը հզոր։

ԱՅՍ ԿՅԱՆՔՈՒՄ

Այս փշուր-փշուր
Ապակե կյանքում,
Մարդու խիղճը քար
Այս հպարտ կյանքում,
Ում հոգին՝ թռիչք,
Ում հոգին՝ փշրանք,
Ում կյանքը՝ անեծք,
Ում կյանքը՝ հավատ.
Որը անժպիտ,
Որը սիրառատ,
Որը թռչում վեր
Խճերում անտեր.
Այս խրատ կյանքում,
Հարցական կյանքում,
Խխունջի նման
Թաքնված կյանքում
Իմ խոսքը դեպ վեր
Շիջանում է դեռ,
Որոնում է սեր,
Որոնում հավատք
Այս տագնապ կյանքում,
Հրատապ կյանքում
Իր բառն ու բարին
Հրդեհված կյանքում։

ՈՒՏՈՊԻԱ

Սկզբից իզմ-ն էր - «դարվինիզմ»,
Էստաֆետն էլ՝ թե «մարքսիզմ»,
Թե ի՜նչ Աստված, թե ի՜նչ «բան»,
Թե պայքար է դասական։
Չկա, չկար դրախտ վայր,
Թե կապիկն է նախահայր,
Դու ես Աստված, մեկ էլ տես,
Եղիր ուժեղ, որ ապրես։
Սա է ուժը փրկության,
Պայքար՝ հանուն գոյության,
Թե կբերի կյանք ընտիր
Էվոլյուցիան մեր երկիր։
Ու նա բերեց «լենինիզմ»,
Ստալինյան «մեծ» սոցիալիզմ.
Առա՜ջ դեպի կոմունիզմ,
Առա՜ջ դեպի, դեպի իզմ,
Օ՜, իզմերը այդ ընտիր
Չփրկեցին մեր երկիր։

ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Օ՜, դու՝ Նիցշե, դու տարված
«Տեսակների ծագումով»,
Զարգացումը հաստատած՝
Բարձրացար բեմ քո խոսքով։

Թե հպարտ ու համարձակ
Ուժեղինն է ապագան,
Թե հզորն է տիրակալ,
Նա կվարի դատաստան։

Իսկ դու՝ Շարդեն՝ լավատես
Զարգացնում ես միտք հստակ,
Թե բոլորը մեկի պես
Կունենան մեկ նպատակ։

Թե ռասիզմը խտրական
Գոյություն է ու վիճակ.
Մինչ կդառնաս կատարյալ,
Ճանապարհն է նա միակ։

Որ կմնան ազգերն այն,
Որ ուժեղ են, եսասեր,
Տեսանք՝ ծնեց ապագան
Ադոլֆ Հիտլեր «ազգասեր»։

Հրդեհվում է անխնա
Աշխարհը դեռ ապական,

Մի՞թե այդ է զարգացման
Ուղին դեպի ապագան։

Թե կապիկից ենք ծագել,
Թե մոռանանք Աստծուն,
Դեհ կենդանուց ծնվածն էլ
Կնմանվի կենդանուն։

ՀՈԳՈՒ ԱՉՔԵՐՈՎ

Կույր էր Միլտոնը, երբ «Դրախտ կորցրեց»,
Երբ վերադարձրեց կորցրածը կրկին,
Կույր էր այն մեկը, որ Հիսուս կանչեց,
Եվ որ լույս տվեց փրկիչն այն մեկին։

Կույր ենք մենք աչքով, քանզի չենք տեսնում
Լուսաղբյուր ուղին ծարավ սրտերի,
Հավատանք, որ լույս շողշողա հեռվում
Հույսի շողերով գալիք օրերի։

Որ մեր խորքերում ճրագը ցոլցլա,
Որ վառ բոցկլտա շուրջը հավատքի,
Հավատանք հոգու լույսին հուրհրան,
Որ նա մեզ տանի ապաշխարանքի։

Մի՛ թևանցեք ինձ, ես էլ ձեր նման
Կույր եմ, առաջնորդ կույրին չեն ընտրում,
Հավատանք Աստծո թագավորության՝
Հավիտյան կյանքն է մեզ առաջնորդում։

ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Որտե՞ղ է բարին, որտե՞ղ է չարը,
Որտե՞ղ է փառքը իր բույնը հյուսել,
Որոնց փնտրում են հաղթանակները,
Որոնք փորձել են սրերով խոսել։

Որոնք մահվանն են նայել հարցական,
Նայվածքով ինչ-որ գաղտնիք են հայցել,
Ավերող բազկով դարձել հաղթական,
Թափանցող մտքով հարցեր են պարզել։

Հաղթանակները պարգևատրող ձեռք,
Հաղթանակները տոն ազգապարծանք,
Գոյության պայքա՞ր, թե՞ պատմական
վերք,
Թե՞ մարդու անփորձ ուղեղին փորձանք։

Ո՛չ, համաձայն չեմ ես հաղթանակին,
Ես դեմ եմ ամեն մի նոր փորձության,
Քայլերթեր անցած զիլ շեփորներին,
Չէ՛, չեմ վերագրում ուժը քաջության։

Հաղթած ու պարտված դրոշների տակ
Ծածկված ննջում են դեռ կորուստները,
Չլինի՛ հանկարծ՝ զուր-իզուր էին
Նապոլեոնյան փայլուն մարշերը։

ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կայսրությունները հաջորդում իրար,
Ձեռքից ձեռք փառք են փախցնում անընդմեջ,
Նրանց երազը ճանկում է աշխարհ,
Մարդասպան ձեռքն է քրքջում անվերջ։

Օ՜, զորեղ կայսրեր, դու՝ Համուրապի,
Թիգլաթպալասար, թագդ զորավոր...
Եվ դուք՝ դարեհներ, ջանքեր պարսիկի,
Ու՞ր եք շքերթներ հավերժ փառավոր։

Փորձը փորձանք է, փորձանքը մի հոր,
Եվ այդ նույն փորձից օգտվեց Ա Մեծը,
Եկավ իրեն հյուր, լսեցին մի օր՝
Ալեքսի շորը կերել է ցեցը։

Եվ ո՞վ է լսել, թե կայսրությունը
Թալանչի ձեռքը լինի սրբազան,
Ու՜ր եք, սուրբ սրբոց հոռոմ կեսարնե՜ր,
Ու՜ր է ձեր կառույց տունը սրբազան։

Ու՜ր եք հորդաներ՝ մոնղոլոիդներ,
Ձեր ոսկին դեռ կա, բայց դուք չե՜ք եղել...
Ո՜վ բոնապարտյան դուք հաղթանակներ,
Արյունը հեղվել, եղել-չեք եղել։

Ու՞ր եք բռունցքներ կոմունիստական,
Ու՞ր եք հորինվածք փորձարկություններ.

Ու՞ր եք մաքրարյուն երկիր ժառանգող
Շիկլգրուբերյան մեծ ցանկություններ։

Երեկ դու՝ օսման, այսօր անգլիացի,
Այսօր ռուս, վաղը ամերիկացի,
Օ՜, կայսրություններ, օ՜, կայսրություններ,
Ես ձեզ կոչում եմ նեանդերտալցի։

Դե գիտենք, գիտենք՝ կյանք է, պայքար է,
Բայց դե երկտողն է ժպտում գաղտնատես,
Որ արդարները պիտի ժառանգեն
Հավիտյան ապրեն, ապրեն նրա մեջ։

ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱԽՈՍՈՎ

Ֆաշիզմ կանխեցին ժողովուրդները՝
Ռուսը, վրացին, հայը, լիտվացին,
Հաղթանակ տարան եղբայր ազգերը,
Մայիսի ինը տոն օր կոչեցին։

Անհաշիվ մայրեր դարձան սգավոր,
Անթիվ այրիներ՝ աչքերը ճամփին,
Որբեր ցիրուցան, համատարած սով,
Ու երգն էր թնդում «Մեծ հաղթանակի»։

Գովերգվեց պատվով, պարգևատրումով
Եղբայր ազգերի միությունը կուռ,
Ու փառաբանվեց տարիներ պատվով
Անհայտ զինվորի հիշատակը լուռ։

Անցան տարիներ, ու եղբայրները
Շիկացրին սրեր, դարձան ախոյան,
Մոռացան իրենց հաղթանակները,
Ծավալվեց պայքար մի ազգամիջյան։

Մոռացած իրենց ճամփան «փառավոր»՝
Սրահարում են մեկը մյուսին,
Անհաշիվ մայրեր դարձան սգավոր,
Անթիվ այրիներ՝ աչքերը ճամփին։

ԵՍ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ

Ես հավատում եմ, որ հորինվածք ենք,
Որ մի նստվածք ենք այսօր տիեզերքում.
Ես հավատում եմ, որ կառուցվածք ենք
Օրեցօր փլվող վիհի եզերքում:
Երկնքում, նաև մեր կտուրի տակ,
Հավատում եմ այն դրախտ կոչվածին,
Ինձ մեկը հարցրեց. «Դու հավատու՞մ ես,
Որ կյանքն ինքն է հենց դժոխքը երկրի»:
Ես հավատում եմ մրջյունի ձագի
Հավատքին դեպ մոր գերբնային ուժի,
Ես հավատում եմ՝ կան խաչով բուժող
Բժիշկներ՝ մտքով կեղծ մարդաբույժի:
Անհաշիվ հավատք, անհաշիվ կարծիք,
Ամենն էլ՝ մենք ենք ճշմարիտ ուղին,
Ես հավատում եմ, որ կան փուչ մարդիկ՝
Քարոզել սիրող, դատարկ, սնամիտ:
Օ՜, չի գտնվի մեկը այս երկրում,
Որ ինձ զարմացնի ինչ-որ մի «բանով»,
Քանզի սառնասիրտ ես հավատում եմ՝
Պատել է ինչը ողջ երկրագնդով:

ԵՍ ԱՍԱՑԻ՝ ՈՉ

Համաշխարհային հեղափոխության
Կոմունիստական հաղթանակներին,
Ռազմական դաժան մրցավազքերին
Ես ասացի՝ ո՛չ։

Ես ասացի՝ ո՛չ ավազակ դարձող
Երեկվա խոհեմ պատանիներին,
Թմրամոլության ուղեղ շղթայող
Թակարդվողների թույլ հնարքներին։

Ահաբեկչության, ազգայնամոլի,
Ցեղասպանության բոլոր ձևերին,
Աշխարհի տարբեր կետերում թաքնված
Օրեցօր պայթող քնած ռումբերին։

Ես ասացի՝ոչ փողից կուրացած,
Դե այսպես կոչված գործարարներին,
Ջրեր պղտորող շահին ստրկացած
Օդ թունավորող վարակ մտքերին։

Ես ասում եմ՝ ոչ,
Ո՛չ, «հարգենք օրենք» օրենքը լքած
Այսօրվա օրենք պաշտպանողներին,
Ժողովուրդ– ձայնի ընտրանքից ուռած
Քաղաքական սպիդ տարածողներին։

ՈՒԹՅՈՒՆ, ՈՒԹՅՈՒՆ

Է՜յ, աչքդ լույս, ո՜վ մարդկություն,
Ծնունդ ու կյանք, երջանկություն.
Այս որտեղի՜ց ատելություն,
Ու դառնություն, սրտնեղությու՜ն,
Օրվա հանդեպ անճարություն,
Սերը՝ հրճվանք, սերը՝ խաբկանք,
Հույսն ի կատար, նաև պատրանք,
Պահը հանցանք, պահը խաղաղ,
Երեք հատ կանչ, մի աքաղաղ,
Մութ անցյալը՝ լույս երազանք,
Երազանքը՝ ներկա լլկանք,
Սկիզբը անվերջ գաղտնիություն,
Վերջը՝ անսկիզբ անմահություն,
Մի հանելուկ՝ հարց-փորձություն,
Հազարադեմ փուչ մարդկություն,
Ձեռքերը վեր՝ դեպ մաքրություն,
Իսկ դե այնտեղ
Ությու՜ն, ությու՜ն։

ՓՈՂԸ

Ի՞նչ են որոնում անապատներում
Քարավաններին զիլ հաչողները,
Այդ ի՞նչ են խնդրում վեհ բարձունքներում
Պարտքի մեջ խրված տեր կանչողները։

Ու՞ր են թևածում վեր թռողները,
Անթև, անմարմին ամպերից անդին,
Ու՞մ են որոնում չոր լացողները՝
Անարցունք, ձայնեղ թրջող անձրևին։

Այդ ու՞մ են փնտրում մութ գիշերներին
Մարդուցը կառչող մարդ խաչողները,
Սրտատրոփ կաշկանդ նեղ ճամփաներին
Մոլի մուրողը, գրպանի գողը,
Խորհում է փողը։

ԳԻՆԵՀԱՄ ԽՈՍՔ

Ով-եր, ում-երին ծառայող
Շնչահեղձ կյանքի սցենարում
Ստեղծվածներ՝ իրար դեմ ելնող,
Կառքերի ոսկե արշավում։

Աղքատը մեղքն է մեղքերի,
Ունևորը՝ կատարյալ,
Բռունցքն է տերը գործարքի,
Լծակն է անկուշտ, նզովյալ։

Կերտում է ճոխություն նոր դարին,
Դառնում է կյանքը լրբություն,
Դառնում է փորձանք աշխարհին՝
Կերտելով մի նոր պատմություն։

Սա է պատկերը իրական,
Սա է պատկերը մեր օրի,
Հարբած են բարքերը, հղփացած,
Կտարվենք գինով դեռ Նոյի։

ՓԱԿՈՒՂՈՒՄ

Կյանքը կախված է մեկ մազից,
Ամեն գառին գայլի ռհմակ,
Կյանքը չարից ընկել հալից,
Ամեն շնչին՝ անթիվ ծուղակ։
Ատոմ ու նեյտ՝ կախված վերից,
Ա՜խ, ոնց հասավ այնտեղ մահը,
Սիրո երգն է վառ աստղերից
Ընկնում, որ շուտ մարի շառը։
Ո՞րը ընտրի անթիվ ուղուց,
Տնքում մարդը՝ հայացքը վեր,
Թե ոնց դուրս գա այս փակուղուց,
Ո՞վ կմեկնի ձեռք փրկաբեր։
Ո՞վ կմեկնի ձեռք փրկության,
Երբ մկանն է հպարտանում,
Երբ այս բեմում ողբերգության
Խեղկատակն է հերոսանում։
Երբ աղքատն է հարստանում,
Վերից ծաղրում աղքատներին,
Երբ հարուստն է աղքատանում,
Թափում անեծք հարուստներին։
Շահի համար ամեն որձ-կան,
Երբ պատրաստ է մարդաորսի,
Շահի համար ամեն վարձկան,
Երբ որ զոհն է գարշ բոր-ԲՈՍՍ-ի։
Ո՞րը ընտրի անթիվ ուղուց,
Տնքում մարդը՝ հայացքը վեր,

Թե ոնց դուրս գա այս փակուղուց,
Ո՞վ կմեկնի ձեռք փրկաբեր։
Այս հարցի դեմ փողն է անզոր,
Ու կայսրերը անզորացան,
Այս հարցերի հարցից հզոր
Իմաստուններ տկարացան։
Օ՜, պարտվում եմ, ձեռքերս են վեր,
Շատ է խոսվել չարի մասին.
Պիտի տածեմ բարիք ու սեր,
Ես կգանձեմ երգեր անգին։

ԳԱԼԻՔՈՒՄ

... Ու շենքեր են լեռնացած,
Կառույցներից խիտ շերտված,
Քայլող կամուրջ՝ բազմահարկ,
Մարդանման անթիվ սարք,
Զբոսնող զույգեր երկնքում՝
Ամպերի մոտ, պուրակում,
Ու նայում է դեպի վեր,
Փնտրում է կյանք նա շշմած,
Ու շարժվում է հնիհև
Մարդը արդեն շվարած։

ԹՌԻՉՔ

Ամեն-ամենը իմ աչքին
Թռիչք է կյանքը անվեհեր,
Մի քաղաք՝ դարի կտուրին,
Երկնքում քամհար պուրակներ։

Փոխված էր կյանքը, անսովոր,
Մետաղն էր սիրում նմանին,
Ամենուր շուրջս սիրախաղ,
Ամենուր նորն էր իմ աչքին։

Հասկացա փոխվել էր կյանքը,
Ու ժամանակն էր սլացել,
Ու սերն էր հաստատող կարգը,
Իսկ իմ մեջ վիճակ է մի անել։

Երազում . . .

... պատկեր՝ անձև ու գունեղ,
Բացվեց երկնքում ՝ փակված աչքերիս,
Նորաստեղծվում էր փարթամ հայացքով,
Նորարարվում էր փթիթ տարազով,
Սպասում էր՝ ձև տամ մի նորատեսակ,
Վառվում էր ինչպես մի նորապսակ,
Ու ավելին էր ձգտում երևալ,
Ինչպես լուսին էր ուզում նա ժպտալ,
Սպասում էր պատրաստ դեմ-դիմաց աչքիս,
Լողում էր իմ դեմ փաթաթված խոհիս,
Ուզում էր որպես մի նորալուսին,
Դառնալ նորահարս կամ նորածաղիկ,
Թեկուզ և ամպիկ, վառվռուն աստղիկ,
Թեկուզ ծիածան, կամ թեկուզ շողիկ,
Խորհում եմ՝ տամ ձև բազմահրապույր,
Վարդի մի թփի՝ մի հրաշաբույր,
Կամ մի սիրամարգ՝ մի հազարագույն,
Կամ թե արշալույս՝ վառ, կարմրաձույլ։
Տվեցի, առա, ժամանակն էլ կար,
Ծանր ու թեթև արեցի երկար,
Մինչ կփնտրեմ ձև համաձայնաբար,
Այլևս չկար։

* * *

...Հայտնվեց մի գեղեցկուհի,
Մերկ էր լիովին այդ սքանչելին.
Երկա՛ր ու երկար շիկահեր ծամով,
Անբացարելի շարժ ու ձևերով,
Սեթևեթանքով, նվագի շուքով,
Փաթաթվում էր ինձ, հեռանում կրկին,
Շրջապտույտ էր գործում իր դիրքին,
Շուրթերը դողում անձայն երգում էր,
Սիրտը թպրտում հաստատ պոկվում էր,
Պարու՛մ էր, պարում՝ հնչյուններ գրկած,
Ծաղիկ էր ոտքի տակ համատարած,
Մեկ հայտնվում էր դեմ-դիմաց դեմքիս,
Մեկ սիրաշահում ժպիտ թիկունքիս,
Ու այդպես երկար-երկար նա փայվեց,
Պարեց ու փարվեց ու փայլատակեց,
Տեսավ՝ ինձանից բան դուրս չի գալիս,
Ծամը ծածանեց, չքվեց ինձանից:

* * *

... սառցե մի գեղեցկուհի
Թե՝ քեզ սիրում եմ, փրկիր, հալվում եմ,
Արի համոզիր այդ ցուրտ դիցուհուն,
Որ արևի պես շուրջս այրում եմ:

Իմ տաքությունը այս աշխարհից չէ,
Մի ձգտիր հասնել իմ վառ շողերին,
Թե չէ կհոսեն ջրածիններդ,
Մի լքիր սառը քո բացիլներին:

Անունդ «մրսես», ցրտերը մարսես,
Եղածդ ձմեռ, կտոր սառցագունդ,
Իմ տաք շողերը թե որ համտեսես,
Դու պիտի լինես մի մեծ երկրագունդ:

* * *

Կապտաճերմակ թևավոր
Ծաղկեփնջիկն իր ձեռքին՝
Մտավ, նստեց պատվավոր
Թագապատկան իր գահին։

Դյուրաճկուն շարժումով
Երջանիկ շող ինձ նետեց,
Լուսաճառագ հայացքով
Իմ անկողնուց ինձ կտրեց։

Իջեցրեց ինձ մի կղզյակ,
Զմրուխտաշող կանաչին,
Ինչպես նրբին մի դայակ
Ինձ օրորեց ծովափին։

Երգեց մի երգ մայրական,
Օրոր-շորոր իմ մահճին,
Գունապաճույճ թևերով
Դարձավ հովհար իմ դեմքին։

Հանկարծ մի ձայն՝ թե, պարոն,
Դուք ուշացաք ձեր գործից,
Բացվեց աչքս, դարձա զգոն.
–Վերադարձրե՛ք ինձ նորից։

ԽԱՂԱՁԵՎ

Այսօր խաբում է ինձ քամին,
Անկոչ հյուր է՝ ինձ անարժան,
Ցրտասարսուռ սուր նետերով
Խառնում ներսս բիրտ ու դաժան։

Թե աշունն է աչքակապում,
Չի երևում դեղին սավան,
Թե ձմեռն է ինձ խաղարկում,
Չէ, չի փռում սպիտակ վրան։

Ո՜չ, աշուն է, ո՜չ էլ ձմեռ,
Ձև է խաղից իր անբաժան,
Մոռացել է, որ կա արև,
Որ կա գարուն, դաշտեր ալվան։

ԵՐԳԻ ԾՆՈՒՆԴ

Սիրելու, երգեր ծնելու,
Սիրելու, սիրվելու-մանկատնում
Պահելու մանկան, սնելու
Սպասելու՝ երբ է մարդանում:

Մարդանալ ու երգվել բառերով,
Աղոթքով շշնջալ սիրո երգ.
Քաղցրանալ ու մարդու մտքերով
Հավաքել իմաստուն անուշ բերք։

Ու հրաժեշտ աշնան գույներին.
Մրսելով ձմռան ցրտերում,
Հասնելով գարնան գորգերին,
Թափառել կանաչ մարգերում:

Ու սիրել, ու սիրվել շատ ու շատ,
Բարևով ծաղկանցը մեկնել ձեռք,
Մեղվի պես գուրգուրել սիրաշատ,
Որ ծնվի մի մանկիկ, մի նոր երգ։

ՓՈՂՈՎ Ո՞ՆՑ ԱՌՆԵՍ

Ասում են՝ ամեն մեկը իր հերթին
Մի ծառ անպայման պետք է որ տնկի,
Պահի, մեծացնի ու բերքի ժամին
«Նուշ անի» ամեն անցնող–դարձողի։

Կասեն՝ շնորհքդ ավելին լինի,
Կասեն՝ լավ ապրես ու երկար ապրես,
Կասեն՝ թող Տերը միշտ քեզ հետ լինի,
Այդքա՛ն գոհություն փողով ո՞նց առնես։

Իսկ թե չմաղթեն, կքայլես դու գոհ,
Գոհ՝ ինքդ քեզնից, ամեն, ամենից,
Կժպտաս «անհոգ» դեմքներին դժգոհ,
Այդքան գոհություն փողով ո՞նց առնես։

Կապրես որպես Մարդ այս երկնքի տակ,
Լավություն կանես, ջուրը կնետես,
Ջուրը կշրջվի կրկին ծառիդ տակ,
Այդքան գոհություն փողով ո՞նց առնես։

Մեկ էլ կտեսնես՝ քեզ շատը տրվեց,
Ու կուրախանաս, կուրախացնես,
Այն աշխարհ դու գանձ կտանես քո մեջ,
Այդքան գոհություն փողով ո՞նց առնես։

ՓԱԽՍՏԱԿԱՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ

Փախչող կյանքից խիստ պարտված՝
Հուսակտուր ճամբարում,
Վերից ընկած կտոր հաց
Ձեռքից ձեռք են փախցնում։

Սովահալած մի օրիորդ՝
Նիրհած, աչքը երկնքին,
Ու՛ երկիրն է աչքին խորթ,
Ու՛ ինքն է խորթ ամենքին։

Մոտենում է պատանին՝
Ձեռքին անգույն կտոր հաց,
Ու մեկնում է օրիորդին,
Ու թափվում է ժպիտ լաց։

Լքված դաշտում այն անսիրտ
Երկու մուրազ միանում,
Միանում են երկու սիրտ
Փախստական ճամբարում։

ԿՅԱՆՔԻ ԳՐԿՈՒՄ

Անպաշտպան ընկած փոքրիկ ծտի ճուտ
Թպրտաց մայթեզրի կանաչում,
Մոտեցավ նրան մի ձեռք անմաքուր,
Շպրտեց անզորին անզղջում:

Սանրեցի ուղին հույսով անվարան,
Փնտրեցի, փնտրեցի մանկիկին,
Հոգնեցին մտքերս ու հեռվում կորան,
Նիրհեցին կոպերն իմ անհանգիստ:

Այն այգում դայակ, այն այգում մենակ,
Լռում է մի գաղտնիք կենսամետ,
Այն այգում դիմակ, այգում դժնդակ
Նա մնաց մենակ իր Աստծո հետ:

ՍԻՐԱԽՆԴԻՐ ՀԱՅԱՑՔ

Կային նվերներ, ծաղիկներ,
Աչքերի ուրախ ցողիկներ,
Մեղեդի, կատակ, զուգապար
Եվ ուրախ, ուրախ տաղիկներ։

Կար մի սիրտ՝մտախոհ, միայնակ,
Կար մի սիրտ՝ թախծոտ, մթամած,
Շուրջը ստվերներ առկայծող,
Եվ սիրուն ծաղիկներ «թառամած»։

Մտավ ներս մեկը լուսալիր,
Նայեց աչքերով սիրամած,
Հարվածեց, հրդեհեց մի կիրք,
Նա դարձավ արև շիկացած։

Կային նվերներ, ծաղիկներ,
Աչքերի ուրախ ցողիկներ,
Ժպիտներ, կատակ, զուգապար
Եվ ուրախ, սիրով լի տաղիկներ։

ՕՐԻՈՐԴԻՆ

Քամին տանում է կրքերը վառված
Ծովափին կանգնած օրիորդի,
Ծովը անզոր է սրտին հրդեհված
Իր սերը խորտակված օրիորդի։

Միայն ամպերը կանգնեցին սատար,
Կայծակ որոնող օրիորդին,
Թափեցին անձրև, թափեցին վարար,
Փրկեցին հրդեհից օրիորդին։

Արեց թևանցուկ կյանքը ժպտադեմ
Ծիածան որոնող օրիորդին,
Նայում էր մեկը աչքով սիրահար
Ծովափին երազող օրիորդին։

ՑՆՈՐ ՀԵՔԻԱԹ

Լողում էր կսկիծը լճակում
Գոյացած աչքի մեջ սիրահալ,
Նայեց դեպի վեր. երկնքում
Մթնեցին ամպերը երկրակալ։

Լացեց երկինքը հուզմունքից,
Խառնվեց անձրևը արցունքին,
Ընկավ կաթիլը ու դարձավ
Ինչպես փշրված ապակին։

-Օ՜, սերը, ա՜խ սերն այդ դավաճան,
Ցնոր հեքիաթ էր անցորդի,
Որ եկավ ու կոտրեց ու անցավ
Նրբանուրբ սիրտը օրիորդի։

ՄՏԱԽՈՀՈՒԹՅՈՒՆ

Վաղ առավոտ ձյունառատ
Լուսակարկաչ մի առվակ,
Արծաթաթույր բնություն,
Արկածային մաքրություն,
Անտառի մեջ ինքնավար,
Ջով-հովերը մեղմավար,
Հավերժալուռ այս կղզում,
Ձմռան գրկում, երազում
Ելա մարդուն առերես,
Մտքի ծովը ընկա ես։

ԱՆԿՈՉ ՀՅՈՒՐ

Կցկտուր մի միտք թևաթափ,
Արցունքով իմ գիրկը հեղեղեց.
Շշնջաց ականջիս կեղծաբար,
Ասաց՝ քեզ հյուր եմ եկել։

Հասկացավ, որ հոգնած եմ անչափ
Նվնվան անկոչ հյուրերից,
Շփոթվեց դեմքից իմ հուսահատ,
Հեռացավ կամաց ինձանից։

Մնացինք մենակ՝ ես ինձ հետ,
Խորհում ենք՝ ո՞վ է դառնացած,
Այդ ո՞վ իմ հյուրին խնայեց
Եվ առավ արցունքն իր ցավատանջ։

ԹԻԱՎԱՐՆԵՐԸ

Անցած ծով-ծարավ ճամփա օվկիանում
Թիավարները
Ճաքած շուրթերով ելնում են, պարզում
Առագաստները։
Լողում են անցնում, նայում են հեռուն
Հուսահատները,
Անվերջ օվկիանից լուռ կրճտում են
Չոր ատամները։
Ու եղբայրության երդում մոռացած՝
Կյանք փնտրողները
Նայում են արդեն խենթ աչքով իրար
Նավապետները։
Առանց կողմնացույց լողում են ջրում
Լճացածները,
Փոթորիկներից հալածված-հյուծված
Հուսախաբները։
Կուզեին դառնալ ավար լճացած
Նավավարները,
Բայց, ավաղ, չկան, դեռ չեն հայտնվում
Ծովահենները։
Նայում են հեռուն հեռադիտակով
Ամպամածները,
Դեռ չեն հայտնվում հորիզոններում
Ցամաքումները։

ԽՃԵՐԻ ՄԵՋ

ԻՄ ՈՒՂԻՆ

Ես նայեցի դաժան կյանքին
Նուրբ՝ վարդագույն ակնոցներով,
Բայց և անցա գունեղ ուղին
Խոր կուլ տված արցունքներով։

Ասին՝ հրեն լայն ճանապարհ,
Որ անցնում է բարձունքներով,
Բայց ես ունեմ իմ նեղ ուղին՝
Համեստաշուք արդյունքներով։

Առաջարկներ ադամանդե,
Փոխվիր, դե տես՝ փոխվեց տարին,
Ընտրությունն է բայց թիկնապահ
Եղել ինձ միշտ հավատարիմ։

Ես ընտրեցի մի ճանապարհ,
Որի սկիզբը վարի, ցանի,
Ուր գրված է մեծ տառերով.
«Աստված վերջը բարի անի»։

ԵՐԳԻ ԱՐՏՈՒՄ

Իմ մտքերը խճիճ-մճիճ,
Ինչպես այգի անխնամ,
Այնտեղ ճահիճ, այնտեղ կարիճ,
Տեղեր անհարթ ու անանց։

Ես մտնում եմ բահը ձեռքիս,
Փորձանք է ինձ՝ անփորձին,
Խճերի մեջ, վեճերի մեջ
Ես անցնում եմ իմ գործին։

Փխրում, ջրում-ոռոգում եմ
Աշխատում եմ զօր-գիշեր,
Կտրում, կապում, ամոքում եմ
Տնկիները նրբաշիվ։

Կողքից նայում, դրվատում են
Անցվորները գրատան,
Նվիրում են իրենց խոսքը՝
Բարի լույս, հե՛յ այգեպան։

ԵՐԳԵՐ ԵԿՎՈՐՆԵՐԻՆ

Նոր հավատով թելը խոսքի՝
Լեզվի թուրը, խոսքն իմ նախնյաց
Անտեսում է արծաթ, ոսկի,
Հայցում օրհնանք սուրբ աղ ու հաց։

Ու կծիկն այդ այս խավարում
Չեմ տա ձեռքը ճարպիկ կատվի,
Գործեմ բլուզ ապագայում,
Որ անցյալը չնախատվի։

Լինեմ զգույշ սուր ճանկերից,
Որ չդառնա խճիճ-մճիճ,
Որ եկվորը նոր ցրտերի
Չսարսռա խայթից անխիղճ։

ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԵՐԳՈՎ

Իշխանության ափ-լողափին
Ես գնեցի ծովանկար,
Ես ապրեցի մի պահ սարսափ,
Երբ ասացին քոնն է աշխարհն։

Մարդու կողմից դատվելուց ետ
Կրկին դարձա երազներիս,
Մի արշալույս թե՝ ես քեզ հետ
Անց կկացնեմ կես մեղրամիս։

Խաղաղ եմ ես, չկա իմ մեջ,
Չկա մրրիկ ու փոթորիկ,
Ամպի կույտին՝ կապույտի մեջ,
Չեմ ասի՝ խոսք է աշխարհիկ։

ԲԱՐԵԳՈՒԹԻՆ

Աչքդ բարի, միտքդ լուսե,
Ձեռքդ բաց ու թեթև լինի,
Սիրտդ պայծառ, հոգիդ զուլալ,
Ապրած օրդ հալալ լինի։

Թող չքանան քեզնից հոգսեր,
Թող ժպիտը քեզ ճանաչի,
Ոտքերիդ տակ բացվեն վարդեր,
Ինչի ձեռ տաս, միշտ կանաչի։

ԻՄ ԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ

Չափված, ձևված խոսքերի,
Քաշ ունեցող գործերի,
Մտե՛ք, տեսեք հասուն բերք,
Քաղվորների անթիվ ձեռք,
Ծառաստաններ պտղալից,
Մարդ ու գազան բերկրալից,
Վարձատրություն, օ՛, պատրանք,
Չկա վարձ ու խղճմտանք,
Հասուն բերքը ամենքին,
Չունի փողը ոչ մի գին.
Արքունիքում իմ խաղաղ
Կյանք է, կյանք է մի անգին։

ԿԵՍ ԽՈՍՔ

Կիսախելագա՞ր, թե՞ կիսահաս է,
Թե՞ կիսաբաց է՝ թերասացություն,
Մատնանշեցին ինձ՝ տառապյալիս,
Թե՝ տեսեք հրե՛ն կիսամարդկություն։

Մի սեղմեք դուք ինձ խոսքերով անարգ,
Ես զսպանակ եմ, հետազդեցությու՛ն,
Ձերը հեստություն, այլ ոչ աշխատանք,
Մի՛ հրեք ինձ դեպ հետադիմություն։

Թեկուզ և կիսատ, կես ձայնանիշ եմ
Երջանիկ գրկում ձայնավարժության,
Խելք կտրող դաշտում խորհրդանիշ եմ
Խրտնած ձիերի ձիավարժության։

Դե անցնենք առաջ դուք ինձ, ես եմ-ից,
Տեսնու՞մ եք այնտեղ մի հասուն ելակ,
Թե՝ չէ, չենք տեսնում, այդ ի՞նչ է՝ մեզնից...
Արևն է, տեսեք, այնտեղ բոլորակ։

ԻՆՁ ԱՍԱՑԻՆ

Ինձ ասացին՝ ապրիր այնպես,
Որ չտեսնի միտքդ մորմոք,
Ինձ ասացին՝ ապրիր այնպես՝
Քեզ չկոչեն աշխարհաթող,
Համակցվիր Էպիկուրին,
Հաճո-ն ճիշտն է, հրեն իմաստ,
Այդ մտքի հետ եղա անհաշտ՝
Ապրել կյանով հաճոյապաշտ:

ՀԱԼԱԾԱՆՔ

Խճերի մեջ, վեճերի մեջ դարձա կատակ,
Հավաքվեցին,
Թե մեզ խայթեց,
Եկեք դառնանք նրան մտրակ։

Սրտիս ուրախ, ջինջ ու վճիտ կոպերի տակ
Որոնեցին, վերջը գտան,
Թե՝ հրեն լիճ,
Եկեք դառնանք նրան վտակ։

Դարձա ջրվեժ ու թափվեցի վարա՜ր-վարար,
Թե՝ թորած ջուր է,
Դե շտապեք՝
Դարձա ավար։

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Նորարարության «մետաքսե ուղում»
Իմ քարավանը շահատակության,
Իմ քարավանը ստերդման խաղում
Դարձավ խաղալիք ձեռքին ծուլության։

Իբր թե ոչինչ չի եկել-անցել,
Նառս ավազին թավալ է տալիս,
Չոքում է հանգիստ հոգսերիս անգետ,
Իրեն ի՛նչ՝ ով է տնքում ու լալիս։

Վաշխառուներ են սպասում ինձ հեռվում,
Դե ի՛նչ ես պարտվել իմ դեմ չոքեչոք,
Փրկիր քո եսը, դարձիր պատվակիր,
Վե՛ր կաց դե անբան, մի՛ դարձիր չեզոք։

Չի շարժվում ուղտն իմ. ձգում եմ նրան,
Թքում է դեմքիս, թողնում հետք բախտի,
Բախտն էլ՝ այդ ի՛նչ եք ծեծկռտում իրար,
–Հարված մտրակով խաղում ենք լախտի։

* * *

Մի մանկություն անրջանքի,
Մի ցանկություն վար ու ցանքի,
Ինձ տանում են իմ հայրենին
Կանաչ ճամփով ակնածանքի։

* * *

Տանտիկնություն հեչ չեմ սիրել,
Ես սպասեցի, սրտնեղվեցի,
Հանկարծ սերը եկավ ինձ հյուր,
Հոգով, սրտով սպասարկվեցի։

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԵՔԻԱԹ

Բարդիները օրորվում են մեղմասահ,
Օդը լի է քնքշանքներով անանուն.
Քամին եկավ ու հեքիաթով ասաց այն,
Ինչ լինում է լոկ երազում պատանու։

Թե կա՛, չկա՛ մի թագավոր կա տկար,
Նա հիվանդ է, ավանդում է իր հոգին.
Ունի սիրուն չքնաղ օրիորդ մի աղջիկ,
Որ չունի սեր, որ փնտրում է նա մեկին։

Թե՝ շտապում են պատանիներ մրցարան,
Շեփորներն են փչում ի լուր աշխարհի,
Թե հաղթողը թեկնածուն է իսկական,
Նա կլինի ընտրյալը էն սիրունի։

Ասում՝ արի տանեմ չքնաղ արքունիք,
Ասում՝ թե նա փնտրում է հենց պոետին.
Չհասկացավ, որ ես ունեմ ընտանիք,
Այդ ո՞ր քաջն է դավաճանում ամրոցին։

Մեղմիկ քամին ասաց իր խոսքն ու անցավ,
Քամիները սուր փչեցին ու անցան.
Մնաց մի միտք դարպասներին պահապան,
Մնաց մի բերդ՝ թառած ժայռին անսասան։

ԵՍ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՄ

Ինձ քարկոծում են, ուրեմն ես կամ,
Խղճում եմ՝ դեռ կան հոգիներ տատան,
Վարկաբեկում են, դատում անիմաստ,
Բայց չկա մեկը՝ պատրաստ դեմ ելման։

Մարտահրավերս նետեցի առ դեմ,
Բայց դե խոտանն են կյանքի քրտնաջան,
Չերևաց մեկը, որ դուրս գա իմ դեմ
Թեկուզ և փտած մեխերով խաչման։

Նրանք չեն սիրում ջրի մակերես,
Քանզի ջրերի խորքերն են միայն,
Քանզի չեն կարող լինել պարզերես,
Օ՜, ինչքան մեղք են անճար ու անձայն։

Ես հասկանում եմ խոր թաքնվածներին,
Խաղացողներին կծիկով պատվի,
Ոչխարի մորթով կիպ փակվածներին
Ներքուստ ճանկոտուք ցատկերով կատվի։

Ես հասկանում եմ ուշացողներին
Մրցապայքարում կյանքի այս դժնյա,
Քանզի օվկիանում խորտակվողներին
Փրկության ծեղ է պետք ամենօրյա։

Մտնում եմ նրանց նողկալի դերը
Մարդուն քրքրող գետնահարկ խորքում,

Գտնում են մեկին, անիծում հերը,
Օ՜, ինչ դաժան է այնտեղ՝ դժողքում:

Հասկանում եմ ես բանսարկուներին,
Անկարողներին հասնել շնորհքով,
Առանց զառերի խաղացողներին
Ժպիտով կոփված իմ խաղաղ հոգով:

ԺՊԻՏ ՀԱՎՈՒՐ ՊԱՏՇԱՃԻ

Մեկը ժպտում է - երջանիկ է նա՝
Փայլուն աչքերով կտրիճ մի կորյուն,
Ժպտում է, ավաղ, տեսնում եմ ներքուստ,
Տեսնում եմ սրտից կաթում է արյուն։

Ժպտում է, ես էլ նվիրեմ ժպիտ,
Որ լցվի հույսով, կյանքով հարաճուն,
Դե ինչ, կժպտամ հոգսերիս միջից,
Իբրև իմ սրտում բացվում է գարուն։

Ժպտա, որ ժպտամ, կժպտամ, ժպտան,
Դեհ ժպտանք իրար, որ ժպտա կյանքը,
Քանզի ժպիտով... ափսոս լրջացա,
Ինչքա՜ն դավեր են քանդում աշխարհը։

ԱՍԱ, ՈՐ ԼՍԵՆ

Արևից ճաքող ծիրանի նման,
Նաև նռան պես ճաքում է խոսքը.
Քաղվոր է փնտրում, փնտրում է
պաշտպան,
Որ չվերմակի վաղ ձյունահոսքը։

Թե չէ շուտ կանցնի բերքահավաքը,
Մենակ կմնա դաժան ձմռան դեմ.
Կողքովը անցնող այն ձիակառքը
Չի խորհի, որ կա ձյան մեջ հասուն բերք։

Ունե՞ս ասելիք. ասա, շուտ արա,
Դեռ լսողներ են շուրջդ պտտվում,
Թե չէ քո խոսքը կմնա անտեր,
Կմնա անջուր մեծ անապատում։

ԲԱՐԵՎՈՎ

Գարունը վարդ է սիրում,
Արշալույսը՝ արև,
Արտը ցորեն է ծնում,
Իսկ շուրթերը՝ բարև։

Բարև կա՝ զվարթ ու սիրով,
Բարև կա՝ նման ծաղկունքի,
Բարև կա՝ հարբած վառոդով,
Որ կարծես պիտի կայծակի։

Մի՛ դարձիր թաքնված մի կածան,
Բացիր ճակատդ՝ քեզ տեսնեն,
Որ գտնի մեկը իր ճամփան,
Որ քեզնով մեկի գովքն ասեն։

Գարունը վարդ է սիրում,
Քունը՝ անուշ երազ,
Բարևիր մեկին սրտանց,
Որ ծնվի քեզ մուրազ։

Ի՜ՆՉ ԻՄԱՆԱՍ

Դու թախծում ես, դու լացում ես ու կարծում
Կդառնա հետ քո սիրածը, քեզ լքած,
Քեզ կսիրի առաջվա պես ու այնպես
Դու կլցվես արցունքներով ժպտամած։

Բայց քեզ թողեց, բայց նա սիրեց ուրիշին,
Պատեպատ ես խփվում՝ դարձած խելագար,
Մերթ փնտրում ես պատճառ դժբախտ
ավարտի,
Մերթ մոտենում, խոստանում ես ոսկե սար։

Է՜հ, պատանի, դու իմ անբեղ, իմ անփորձ,
Մի՜ համոզիր էլ ինքդ քեզ, թե իբրև
Արժան չէիր, չարժանացար իր սիրուն,
Ի՜նչ իմանաս՝ դա այդպես չէ արդարև։

Դու չե՞ս լսել՝ ես քեզ, իսկ դու ուրիշին,
Այդ ուրիշն էլ ի՜նչ իմանաս՝ ինչ սիրով,
Այդ ի՜նչ հրով կպարուրվի քո սրտին,
Այդ ո՞ր ճամփան կիմայի իր ծիրով։

ԱՆՍԱՀՄԱՆԻ ԳՐԿՈՒՄ

Երամներով շարան-շարան
Իջավ չքնաղ մի տեսարան.
Իջան անթիվ շաղփյուն-շաչյուն,
Դուք կռունկներ՝ ձայնեղ-հնչուն,
Պանդուխտ էիք, թափառական,
Հյուծված՝ ինչպես փախստական,
Իջաք կանաչ իմ լճափին,
Հանգստացաք ամռան տոթին.
Հայրենիքով իմ լիացաք,
Իմ խաղերին մտերմացաք,
Եկավ աշուն, եկան ցրտեր,
Դուք վախկոտներ,
Ինձ թողեցիք ու հեռացաք։

-Ի՞նչ ասել է՝ հայրենիքս,
Կամ թե՝ եկաք, բնակվեցիք.
Ի՞նչ ասել է՝ փախստական,
Կամ թե՝ պանդուխտ, թափառական.
Միշտ մեր առջև բաց են դռներ,
Մենք չգիտենք սահմանը ձեր,
Բախտավոր ենք հավերժական։

ՄԵՐԺՎԱԾ ՋՈՒԹԱԿ

Մեղեդին մեղմ ու դյութական
Զգեց անկյուն նեղ փողոցի,
Կույր ծերունին ջութակահար
Կոպեկներ էր մուրում կյանքի։

Հնչյունը նուրբ իր թելերով
Կապկպում է ինձ՝ տարվածիս,
Շրջապատում հեքիաթներով,
Մտնում սիրտը սիրահարիս։

Զրընգ, զնգաց քանի կոպեկ,
Կես հաց գտավ ծեր թշվառը,
Ոստիկանը եկավ ու մեկ
Զարկեց-փշրեց բախտի զառը։

Ասաց. «Երեկ քեզ ասացի՝
Չնվագես իմ փողոցում,
Կամ թե հարկս մուծիր»,-ասաց
Գնիր ինձնից թույլտվություն։

Անցավ օրը։ Առավոտը
Զգեց անկյուն խղճահարիս.
Ծերունին էր ջութակահար
Պարզած ձեռքը անձայն լալիս։

ՄԵՆ-ՄԵՆԱԿ

Թե որ ծանրանա քաշը քո հոգու,
Օգուտ չի բերի քիչ ուտելը քեզ,
Թե որ ծառան ես ներքուստ չար ոգու,
Չի փրկի մեղքից պատշաճ վարքդ հեզ։

Թե խորտակվող ես քո խորքում խստիվ,
Ճյուղից կախվելդ իզուր է հարկավ,
Թե որ ագահ ես՝ մոռացած պատիվ
Աշխարհի ոսկին չի դարձնի քեզ բավ։

Կապրես շահով լի ծմծմող բառով,
Մարդկանց ոտքերին կլինես թակարդ,
Մեկ է՝ ապրես կուշտ, փայլես դու փառքով,
Մի օր կմնաս քո դեմ մեն–մենակ։

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

Մի ամբողջ կյանք զբոսավայր
Դահլիճներում ձեռնահամբույր,
Ճոխ ուղերթեր, ճանապարհներ,
Նվիրական ծաղիկ, համբույր,
Անցած ուղին մի ցոփություն,
Եկավ աշուն, պտղահավաք,
Չկար մի ձեռք՝ տար բաժակ ջուր,
Հարազատ ձեռք մի ջերմառատ.
Զբոսաշրջիկ իր կրքերից
Նա չթողեց հետնորդ գարուն,
Թողեց կախված պատից նկար՝
Մի պատմություն, մի սուտ անուն։
Մի ամբողջ կյանք ցուրտ սառցարան
Դահլիճներում իր մենավոր
Զգեց սառցե հայացք ձմռան՝
Աչքերով կույր, խորհրդավոր։

ԵՐԵԿՈ ԷՐ

Հավաք էր բուռ ժպիտների,
ժամը մութ էր։
Գովասանքից մեկը մյուսին՝ խնջույք է դե,
պահը սուրբ էր։
Հոգիս վերջ էր պրպտում լուռ ճոխ սեղանի
հարցը բուրդ էր։
Լուսնկան էլ վկա էր այդ գովասանքին,
սիրտս մութ էր։
Նախակենացն էր «փառավոր» ձգվող անվերջ,
ճառն էր անմիտ,
Սեղանապետ էին բոլորը խոսքակեր,
խոսքն էր կեղծիք.
Էլ ի՜նչ աստղեր, էլ ի՜նչ երկինք,մեծարումը
առ էր և տուր,
Բանսարկուի բնում խրված ես քարանում,
մեջս էր ցուրտ։
Դատաստանն էր իրենց ձեռքին զորեղների,
հացը նյութ էր,
Թամադա էլ թե կար իրոք այդ սեղանին,
նա անգութ էր։

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ա՜խ, ինչ ծանր է Հայաստանում
Ձմեռելը մեր օրին,
Ցուրտը հեռվից, չիքն էլ հետը
Եկան, կպան տնվորին։

Քաշքշվում է նա հևիհև,
Ախ, ձմեռ է դեռ դուրսը,
Լքեց իրեն դրամն այդ խև,
Ու կտրվեց իր հույսը։

Նա մոտեցավ հարևանին,
Պարտքով խնդրեց կտոր հաց,
Հարևանն էլ՝ հարևանին,
Տերը չկար, դուռն էր բաց։

Նա էլ եկավ ու թափ տվեց,
Հաց որոնող իր ուսը,
Ուզողի մեկ երեսն է սև,
Չտվողի՝ երկուսը։

ՄԻ ՆԵՏԵՔ ՔԱՐ

Մի՛ նետեք քար մեր անցյալին,
Դուք իմ ազգի թերահասներ,
Մի՛ նետեք քար անցածներին,
Դուք նողկալի ապերոներ։

Մի՛ նետեք քար հոգիներին,
Խաբվածներին նահատակված,
Մի՛ նետեք քար մեր անցյալին,
Խամաճիկներ թելից կախված։

Դուք մի բուռ եք, քիչն եք ազգի,
Մի՛ կոխկրտեք խոսքը հայոց,
Ազգը դուք չեք իմ անվանի,
Մի՛ փչացրեք վարքը հայոց։

Պատրաստ չէի կրակելու,
Ձեռք մեկնեցի ես թիկունքից,
Պատրաստ չէիք կրակելու,
Մի՛ կրակեք մեզ թիկունքից։

Պատմությանը քար մի՛ նետեք,
Ներկայացնող ազգանուններ,
Պատմություն չեք դառնա երբեք
Հագնողներդ պատմուճաններ։

Թե կարող եք՝ հավաքեք քար,
Դարձեք քարտաշ ձեր աշխարհին,

Դարձեք հոգով դուք շինարար,
Չէ՛, մի՛ նետեք քար անցյալին։

Թե...

Թե ցույց չտային ուղին պանդուխտի,
Ո՛նց իմանայի համը դառնության,
Թե չբացվեին գաղտնիքներն ուխտի,
Ո՛նց իմանայի ելքը փրկության,
Ո՛նց իմանայի ձևը ընտրության,
Որ կանգնեմ հաստատ ընտրած նեղ
ճամփին,
Թե ցույց չտային ուղին քանքարի,
Չէի հավատա, որ մոտ է ժամը,
Որ նայեմ հեռվից
Աշխարհի վարքին։

ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մեծո՛վ փոքր՝ համբերություն,
Մեջք մեջքի տանք այս կյանքին,
Մի խնձոր կես՝ համառություն,
Որ դիմանանք փորձանքին:
Մի մատ մեղր, կեսն ինձ, կես քեզ,
Մեկնենք տաք ձեռք անհույսին,
Դառնանք մ եկ միտք սեղանի շուրջ,
Անցնենք գործի միասին:
Թե ավել է, փակենք բերան,
Շհանենք աչք մեկմեկի,
Տեսնենք մեր իսկ աչքի գերան,
Չտանենք դեր անգետի:
Հալվենք ոչ թե ջուր ծեծողի,
Այլ մոմի պես լույս տալով,
Մեր իսկ առջև դրված ուխտին,
Հավատարիմ մնալով:
Կնախատե՛ն, կբանբասեն
Ու կկպչեն մեր անձին,
Կհալածեն ու կանպատվեն,
Բայց կքշենք մենք մեր ձին:
Անցնենք պատվով ու հուսալից
Վերից ձգված մեր ուղին,
Գիտենք՝ ծանր է ու տանջալից
Դեպի բարձունք մայրուղին:

ՆՈՐԵՆ ԻՄՆ Է

Օ՜, հոգնել է ուղտն իմ ուխտի
Ավազներում անծայրածիր,
Թուլությունն է ստիպում չոքել
Տառապանքից այս փոշեցիր։

Թուլությունը շուն-գել իմն է,
Չեմ տա մտիկ հաչոցին,
Համառությունը ուղտինն է,
Դեմ եմ իմ դեմ չոքոցին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՄ

ՆԱՎԱԿՈՒՄ

Տիեզերական մեր նավակում
Նավարկում են ու խաղարկում։
Դրոշներով ազգայնական,
Մտրակներով ճիզվիտական
Իրար կցում, կտցահարում,
Նավավարի խաղ են վարում։
Կաշառքներով կապիտալի,
Մոլի կրքով նացիոնալի
Գոչում՝ մենք ենք մենք նավավար,
Մեզ է տրված շնորհքն այդ հար։
Կանգնեց մեջտեղ պապը ձմեռ,
Ասաց՝ օգնեք՝ իջեցնեմ բեռ,
Ու նվիրեց կարկանդակներ,
Շոր ու կոշիկ, մրգեր, գրքեր։
Փչեց քամի արևմտյան
Հեգեմոնիա «մեծ» ատլանտյան,
Ընկավ բեղ ու սպիտակ մորուք,
Կանգնեց կովբոյ, ասաց՝ էյ, դուք՝
Սովահալած աֆրիկացիք,
Ասիացիք, եվրոպացիք...
Է՛յ, դուք ժանտախտ ու սիբիրախտ՝
Ռուս, բելառուս, դուք ապերախտ՝
Գիտցեք ես եմ զուտ նավավար,
Ինձ է տրված շնորհքն այդ հար։

Ով չդառնա կատարածու,
Պատրաստ հումք է նա մսացու.
Ի՛նչ պլյուրալիզմ, ի՛նչ կոնսենսուս,
Լռե՛ք, թե չէ կուտեք կակտուս։

Սա կաշա՞ռք է, թե՞ թուլություն,
«Վերադասի» անզորություն։

Կռճտումով սուր ատամի,
Հմուտ ղեկով նոր Ադամի.
Տիեզերական մեր նավակում
Խաղարկում են ու շահարկում,
Սլանում են անփառունակ
Դեպի անհայտ հազարամյակ։

ԴԱՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Այդ ո՞վ մնաց կյանքից հետ,
Հրեք, անցնի նա առաջ.
Օգնեք՝ ընկնի ճամփամեջ՝
Եկող դարին ընդառաջ։

Ավստրալիայում մեզ հայտնի
Մի մարդակեր իր ցեղին
Անում է կոչ՝ ընկերներ,
Ցավն է աճում մեր գլխին։

Օդից, ջրից, ցամաքից
Դավն է պատում մեր հողին,
Սպիտակ մարդիկ դիվահար
Աչք են դրել մեր տեղին։

Նահանգներում միացյալ
Մինչ ընտրության՝ թեժ կոչեր,
Մեծ ուժերով երկրակալ
Մենք կլինենք գնդին տեր։

Կոչե՛ր, կոչե՛ր՝ աջ ու ձախ,
Եվրոպական ընտանի՛ք...
Իսլամական աշխարհում
Գիտցե՛ք՝ ունենք անելիք։

Կովկասներում՝ մոռացեք
Ձմեռ պապին ռուսական,

Մենք ենք տերը, իմացեք,
Մեր հողերին պատմական։

Մի քրդուհի նամակով
Դիմեց բարձր ատյանին,
Դե փրկեցեք ձեր աջով,
Փրկեք մորթվող իմ ազգին։

Այդ ո՞վ մնաց կյանքից հետ,
Հրեք, անցնի նա առաջ,
Օգնեք՝ ընկնի ճամփամեջ՝
Եկող դարին ընդառաջ։

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ
ՔԱՐՈԶԱՐՇԱՎ

Տվեք դուք ինձ մի խորհուրդ,
Իմ սիրելի ժողովուրդ.
Դե ասացեք՝ ո՞նց լռել,
Երբ որ ազգը թառամել,
Երբ ծախում են մեր պատիվ
Մի խումբ մարդիկ անազնիվ,
Ճգնաժամ է հերթական,
Տնտեսական, ռազմական,
Քաղաքական ծուռ դաշտում
Վարում են խաղ, խաղարկում,
Պահենք մորուք, պահենք բեղ,
Ստեղծենք նոր կյանք համատեղ,
Կա միայն մեկ ընտրություն՝
Հեղ-իշխանա փոխություն,
Կտանք անշուշտ խան-ություն,
Ժողովրդա–վարություն,
Բարի գալուստ մեր խոսքին,
Տվեք մեզ ձայն ձեր ոսկին,
Քանզի մենք ենք մեծություն,
Ճամփան՝ դեպի փրկություն,
Եթե ոչ մենք, ապա ո՞վ
Կդարձնի ազգն ապահով,
Այո՛, չկա տարբերակ,
Ի հանրության խեղճ ու կրակ,
Կա միայն մեկ փրկություն,

Կատարենք ճիշտ ընտրություն,
Էլ մի քաշեք դուք հառաչ,
Եկեք դեպ մեզ ընդառաջ,
Կա նախագիծ այս պահին,
Օգնեք՝ նստենք մենք գահին,
Շրջեք երես դեպի մեզ,
Կլինենք ձեզ ծառա հեզ,
Կստեղծենք թարմ մի ոլորտ,
Մ՛ի ընդհանուր մթնոլորտ,
Աչքից վերև կտանք ունք,
Բարոյական իրավունք,
Նույնիսկ կանենք խաղաղ ցույց,
Սեղանի շուրջ՝ հարցազրույց,
Կդառնաք դուք մեր խոսնակ,
Ինչպես մենք ձեզ՝ օրինակ,
Կանենք աղոթք անարատ,
Կհավաքենք բերք առատ,
Կապրենք կյանքով լիաթոք,
Թող պատրաստվի ամեն ոք,
Ընտրություն է, ընտրություն,
Մենք ենք ազգի փրկություն։
Ու ընտրեցին ճառողին՝
Վաղվա ճարպիկ նոր գողին,
Դարձավ տարին սառած դար
Դժնի կյանքից անարդար,
Ճգնաժամ է հերթական
Տնտեսական, ռազմական,
Քաղաքական ծուռ դաշտում

Վարում են խաղ, խաղարկում,
Պահենք մորուք, պահենք բեղ,
Ստեղծենք նոր կյանք համատեղ,
Այո, չկա տարբերակ
Ի հանրության խեղճ ու կրակ,
Կա միայն մեկ ընտրություն՝
Հեղա– հեղա– փոխություն։

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հովվերգության մեջ ձայնս՝ հնչերանգ,
Չտրվեց սուլիչ քամու սվվոցին,
Չտրվեց մաշող, տաշող սրոցին
Հովվերգության մեջ ձայնս՝ հնչերանգ։

Բայց հարցանիշ էր ձայնատվության մեջ
Խոսքն իմ՝ չտարվող ավել խոստումին,
Չլուծվեց ճառող ասեկոսումին
Ձայնատվության մեջ ձայնս հարցանիշ։

Եվ երբ ապագան եղավ դատավոր,
Երբ որ բողոքը պատեց երկիրը,
Չընտրող իմ ձայնը կոչվեց ընտիրը,
Երբ ժամանակը դարձավ դատավոր։

Եվ ի հեճուկս այն հենության դեմ,
Երբ անողոքը կերավ երկիրը,
Հովվերգության մեջ ձայնս նույներանգ
Նոր հենության դեմ կոչվեց ընտիրը։

ԿՈՒԿԻ ԾՈՌԸ

Երեկ մուկ էր, այսօր՝ վիուկ,
Թե՝ իմ քեռու անունն էր Կուկ,
Դե ինչ, խնդրեմ Կուկի որդին
Տվեց մի զարկ իր կոկորդին։
Դարձավ ճառով ընդդիմախոս,
Ձեռքը գցեց մի բարձրախոս,
Ասաց՝ գիտե՞ք, դուք՝ ամիկներ,
Դուք անշնորհք խայտառակներ,
Թե՝ արծաթին մոտեցեք մեղմ,
Նա կբերի ձեզ ոսկեգեղմ,
Դե հավաքեք, քանի մութ չէ
Իմ խորհուրդը անտրիտուր չէ,
Ու ամենքը իր ուժի չափ
Տարան ընծա մի փորալափ,
Վերջը փակեց օրինանք մի տուրք,
Թե՝ դուք փողին մոտեցեք նուրբ,
Ու հայթայթեք խոսքով շողոմ,
Հափռեք, դարձեք մի վես հոռոմ,
Հանուն նրա դարձեք դուք խուլ,
Թե չէ հրե՛ն անթիվ հմուլ,
Բաց երախով մեկ էլ պատիր..
Վերջում նստիր ու կարկատիր.
Թե գու... , գու-մար, թե լեզվիս է,
Քաշեք, հանեք՝ ջրաքիս է,
Ու որ ժանգը էլ չլափի,
Օծեք յուղով կույս թառափի,

Կողքին տնկեք թիկնապահ-դետ,
Խիստ անցաբան, ամենագետ,
Ու գոտկատեղ ձգեք ագույց,
Դու ես մարդու վառ ապացույց,
Թե տա ապտակ, ասենք՝ ընկնեք,
Ձեր մյուս այտը նորեն պարզեք...
Վերջին խոսքը իր շշուկ էր,
Մի լպրծուն թռչող ձուկ էր,
Երեկ մուկ էր, այսօր վհուկ,
Թե՝ իմ քեռու անունն էր Կուկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՒՏՔ

Ծածանվեց ինչպես դրոշը վառ-ալվան՝
Խոսքերով վառման.
Ծայրահեղություն։

Օ՜, ծաղկեփնջվեց դե՜հ կառավարման
Ձևերով զգացման.
Նվիրատվությու՜ն։

Ծանրացավ ինչպես ոսկին հարգարժան՝
Հանուն իր անվան,
Խեղճուկրակությու՜ն,

Ծանրումեծություն.

Էդ ի՜նչ բարձրություն...

Պարոնայք, այսօր մեզ արժանացավ
Այս մեր ընկերը

Ծափահարություն։

ԿՈՒՌՔԵՐԸ

Ժամանակներն են ծնում տաղանդներ
Ու նաև կուռքեր, որ բարձրանում վեր.
Ելնում են ճառով
Դեպի բարձունքը գահ– տիրանային։
Ու տես՝ ինչպե՛ս են կուռքերն այդ փքվում,
Աստծո անունից հավաքում, գերում
Մոլորված մարդկանց մի հզոր բանակ,
Քաշում են, քաշում իրենց հետևից
Մարդկանց ամբոխներ.
Կանգնելով նրանց կորացած մեջքին՝
Բարձրանում են վեր։
Մի տես՝ ինչպես են ընկնում վերևից,
Երբ տկարացած մեջքերն են ցնցվում,
Տես, թե ինչպես են ընկնում կուռքերը,
Ընկնում, թևերը ժայռերին փռում,
Քսվում քարեքար,
Ինչ– որ մի նշույլ հենակետ գտնում
Ու էլի կանգնում։
Ու տես՝ ինչպե՛ս են թափ առնում նորից,
Սլանում դեպ վեր,
Կախվում են կրկին
Գալիք այս դարի բարակած վզից
Եվ գայթում նորից։
Ու կրկին անգամ փորձ դեպի վերելք։

Փառքի կարոտից այդպես հրդեհված,
Իր իսկ տաքությամբ ուռած ու հարբած,
Առաջ է շարժվում կուռք-մանեկենը
Դեպ հերոսության ակունքն ազգային,
Դեպ ազատ-անկախ փառքի բարձունքը՝
Գահ-տիրանային։

ԱՇԽԱՐՀԻԿ ԽՈՍՔ

ԽՈՐՀՈՒՐԴ

Մի ծուռ մի օր ինձ ասաց.
–Խորհուրդ ունեմ անկասկած,
Ըմպիր կյանքի համ ու հոտ,
Ի՛նչ ես դարձել երազկոտ.
Խղճիդ վրա ծանրացել,
Ծափ ու ծաղիկ մոռացել,
Խրտնած անսանձ ձիու պես
Թռչում, դուրս ես նետում քեզ,
Թե՝ հա՛յ-հարայ, ու՞ր է ելք,
Մարդիկ չունեն հավի խելք.
Թե՝ չգտար հացով մարդ,
Գովերգում ես մեխակ, վարդ.
Թե աշխարհը կշրջեմ,
Էշը ցեխից կհանեմ,
Թե դարձել է մարդը գայլ,
Լավ չէր շան բախտ ունենար,
Թե մի հատու սուր լեզու
Մարդկանց դարձրեց անլեզու,
Իսկ այն մեկն էլ քննադատ,
Ոտքից գլուխ մի գանգատ,
Թե այս մեկը, թե այն մեկ,
Ինը, տասը, տասնմեկ.
Դե հերիք է դարձիր ետ,
Մորմոքներդ ձգիր գետ,
Կուզես հասնե՞լ ասպետին,
Մոռացե՞լ ես Կիխոտին։

ՈՒՆԵ՞Մ, ԹԵ՞ ՉՈՒՆԵՄ

Հանցագործ, հանցանք հեշտ ծածկողներին
Պատասխանեցի հանցանիշներով,
Ասացին՝ ափսոս՝ չունես մարդկություն։

Մթնածիր դեմքեր լուսնալիր ժամին,
Չտեսա բացված կրծքեր ցանկության,
Ասացին՝ ունես դու հավկուրություն։

Հիշողության մութ քարանձավներում
Կորցրի մի պահ հետքը անցյալիս,
Ասացին՝ չունես անցյալ– պատմություն։

Ի՞ՆՉ ԱՆԻ

Թե երկնքում սև-սև ամպեր,
Խաժակ աչքը ախ ինչ անի։
Հասուն խոսքի տեղ անհամբեր
Լուտանք լեզուն ախ ի՞նչ անի։
Ախ, ի՞նչ անի ընչաձարավ
Մարդը՝ աչքին խփած փականք,
Տիեզերական գաղտնիքի դեմ
Իմաստասեր միտքն ի՞նչ անի։

Ախ, ի՞նչ անի նկարչի դեմ
Չնկարված կտավը դեռ,
Իրար սիրող զույգերի մեջ
Չսիրված սերն այդ ի՞նչ անի։
Արհեստավարժ ձեռքի դիմաց
Անփորձ մեկը մտամոլոր
Վերից տրված շնորհքի դեմ
Անշնորհքը դե ի՞նչ անի։

ԶԳԱՍՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Քայլեքայլ արված քայլը հուսատու
Ցորենի թաղված ծլող հատիկ է,
Կյանքի տերևից ընկած, փշրված
Չցատկել՝ ճիչը արցունք ցողիկ է.
Կաշվից դուրս գալը թե աշխարհիկ է,
Նրանից այն կողմ չնաշխարհիկ է,
Ընկած ու ջարդված ոսկորը զորեղ
Անզոր ու անմիտ փոքրիկ մանկիկ է։

ՈՒՐԵՄՆ ԴԵՄ ԵՄ

Մարդ- երամակից, այն էլ ազգակից,
Հանուն գոյության՝ նոր սեղանակից,
Հավատն էլ հանուն համընթաց կյանքի
Ինձ թե՝ զգա'ստ դարձիր մարտիկը կանք-ի
Լինել –չլինել օվկիանում պատրաստ
Դու պիտի դառնաս պայքար-առագաստ
Ու երակազարկ զինավարժությամբ
Չասացի ես ոչ.
Ծիծաղեց մեկը.
–է՛յ– հեռու մնա ազգապատումից։
Հավասարություն կա աբստրակտիզմին,
Չդարձա ես պոչ...
Ե՞ս, թե՞ նա էր ինձ..., ինձ ասացին՝ ո՛չ,
Դու ոտքից գլուխ դարձար ռազմի կոչ,
Թե Աստծո դատը վերցրիր դու քո ձեռք,
Թե քրքրում ես խոր պատմական վերք,
Դե կողմնորոշվիր՝ սպիտա՞կ ես, թե... թե
Թե խառնուրդ միտք է, այն էլ երկաթե,
Թե համամիտ ես հավիտյան կյանքին,
Ուրեմն դեմ ես այս տիրող կարգին։

ՋԵՐՄԱՏԵՆԴ

Ինչպես թեժ արև՝ մի կրակ անդուր,
Շիկացած խորքից իմ արևահուր
Շանթալեզուն է այրում իմ միտքը
Օ՜, իմ պարոնայք, հասկացեք դիրքս,
Այս վիճակում են ծնվում երգերը,
Այս վիճակում են բացվում վերքերը,
Իմ լավ ընկերն է այս պահին ինձ հետ,
Վառվում իմ ներսում, մաքրվում ինձ հետ,
Ու նստում ինձ հետ, ինձ հետ վեր կենում,
Աշխարհի հոգսը ինձ ընծա բերում,
Ու պոկում է ինձ այս չար աշխարհից,
Խոսում իմ լեզվով իմ իսկ անունից,
Դե տեսեք՝ սա է իմ լավ ընկերը,
Ու՞ր է պատկերը, ու՞ր է պատկերը
Ջերմաչափ դրեց թևիս տակ կինս,
Օ՜, տաքություն էր երեսունինը։

ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տուտուցության տզզոցում
Սիրատածեց, սիրերգեց,
Զայնեղության խզզոցում
Իր արվեստը գովերգեց:

Կարճապատում իր խոսքով
Մեկը եկավ ու անցավ,
Թողեց և՛ սեր, և՛ հարգանք,
Էլ ավելի մեծացավ:

Շռայլաձեռ մի շողում
Իր թատրոնում մեծարվեց,
Հագին գունեղ շքեղանք՝
Իր պատիվը լուծարեց:

Մեկն էլ ժուժկալ իր գործով
Կիսեց կտոր աղ ու հաց,
Պարզ ու հստակ իր ժեստից
Անելիքը երևաց:

ԽՈՒՍԱՓՈՒԿ

Գայլի երախ ընկած գառին
Ի՜նչ ասել է բրդատու,
Հողմի ձեռը ընկած ծառին
Ի՜նչ ասել է մրգատու։

Ի՜նչ ասել է՝ սեր ու սիրած,
Երբ մարմինն է կրծում հոգի,
Այդ ի՜նչ անեն արցունք ու լաց
Դաժան սրտին անողոքի։

Նա խուսափեց այս լիրբ կյանքի
Մի վայրենուց՝ խիստ գազազած,
Գայլի բերան ընկած գառին
Թե չէ կասեն՝ մեկն էլ գնաց։

ՀԱՍԿԱՑԱՎ

Բարի մարդը բարի գործն է, բարեկա՛մ,
Բարեկամը բարեգութն է, ո՛վ ընկեր,
Երես տվինք, աստառ ուզեց մի անհամ,
Շռայլում էր խորհուրդները բարեբեր։

Թե՝ գիտունիս դարձիր գերի ու լսող,
Կարդաց, կարդաց կենաց ճառը անկշտում,
Մտավ անտառ, տեսավ այնտեղ նվվացող
Գիտուն աղվես՝ երկու ոտքով թակարդում։

Նա հասկացավ՝ աշխատանքը ջուրն ընկավ,
Որ խոսքերով պատ չես շարի, քարտաշ ջան,
Ու հասկացավ, ասեղ կերած շուն դարձավ,
Բայց կաղկանձով ո՛վ կանգնեցրեց քարավան։

ՄԱՐԴԸ ՄԱՐԴՈՎ

Ոչինչ չասողից ոչինչ չես լսի,
Էլ ի՛նչ ջերմություն քարե սառույցից,
Քիթը ցցածի երես չես տեսնի,
Բա՛ն չես հասկանա նրա զրույցից։

Ասա՝ որ ասեն, որ կոփվի հոգին
Չարի ու բարու դաժան պայքարում,
Ինչքա՛ն էլ կյանքը փուչ, անմարդկային,
Մարդը մարդով է մարդ այս աշխարհում։

ԴԵՌ ՉՀԱՍՏԱՏՎԱԾ

Դեռ քչի մեջ չհաստատված՝
Նա փնտրում է շատը կյանքում,
Դեռ անծանոթ Տիրոջ խոսքին՝
Զբաղեցրել է տեղ դրախտում։

Դեռ չքաշած հոտը ծաղկի՝
–Քի՛չ են, քի՛չ են գարունները,
Դեռ չսիրած թեկուզ մեկին՝
–Քի՛չ են կանանց սիրունները։

Քիչ են երկրում սոխակները՝
Դեռ չլսած թեկուզ մեկին,
Քի՛չ են նվեր-մեխակները՝
Դեռ չտված նվեր մեկին։

Դեռ քչի մեջ չհաստատված՝
Նա չքաշեց օր այս կյանքում,
Դեռ անծանոթ Տիրոջ խոսքին՝
Տեղը նեղ է իր դրախտում։

ՉԹՕ

Երկնքից ընկավ, չքացավ,
Պատրա՞նք էր, տեսի՞լք, գլխացա՛վ.
Դա ա՞ստղ էր ծլլում, մահանում,
Թե՞ երկնաքար էր շիկանում.
Թե՞ ինքնաթիռ էր ահավոր,
Թե՞ աստղ էր մի նոր գիսավոր։
Վերևից իջավ, մեծացավ,
Պատրա՞նք էր, տեսի՞լք, գլխացա՛վ,
Թողեց մի վարկած ու անցավ։

ԵՍ ՔԵԶ ՏԵՍԵԼ ԵՄ

Թե որ ձուկ բռնես, ջրից վախենաս,
Թե ընկնես ծովը՝ փրփուրին սպառնաս,
Թե լեզվի դիմաց թրով դու կտրես,
Քամու բերածը թե ձեռքից խլես,
Թե ուտես առողջ, աշխատես հիվանդ,
Կուշտդ քաղցածին թե մանր բրդես,
Թե որ ծուռ փայտը տաշես, որ շտկես,
Թե սուտ խոսողի տունը հրդեհես,
Թե որ գանգատվես, որ գոհ գոհանաս,
Ես քեզ տեսել եմ,
Քեզնից լսել եմ:

ԱՇԽԱՐՀԻԿ ԱԿՆԱՐԿ

Աչքերից խեղճ աչքով ուտող մի պագշոտ
Աչքով աչքս խոթեց թե՝ տար աջ ու ձախ,
Թե ման ածիր, երջանկացիր, վեհերո՛տ,
Վանիր քեզնից հայացքներդ մտավախ։

Քեզ կժպտան թիթեռները գիշերվա,
Կհուրհրան խարույկի շուրջը կրքեր,
Ու զգած բուրդ քեզ կսարքեն անզգա,
Քեզ կխանդեն երկոտանի գազաններ։

Ու դու կզգաս, որ զավակն ես բնության,
Ու կսիրի էշը գարի հաշվողիդ,
Ու չես տեսնի դու քո աչքի մեջ գերան,
Կասեն՝ արժե, որ տանք թևեր մաշվողիդ։

ՈՒՐԻՇԻ ԹԵՎՈՎ

Թռավ թևով նա ուրիշի,
Վերից ընկավ ախ ուժգին,
Ջարդեց թևը այդ ուրիշի,
Ջարդվեց ձիրքը իր անգին։

Ուշակորույս շարժեց միտքը,
Քամելեոնը կենդանի,
Թափահարեց ջարդված կիրքը,
Քսվեց կրկին նա մեկին։

Ապրիր համեստ՝ չհասկացավ,
Մտավ կրկին թևատակ,
Կպավ մեկին, թռավ վերև,
Կրկին ընկավ ոտնատակ։

Կրկին անգամ աչքի ընկավ,
Աչքից ընկավ բոլորի,
Թանկ ու կրակ իր խոսքերով
Թևավորվեց օր օրի։

Բարձունք, անկում չհասկացավ,
Թեկուզ հենց իր մտքերով,
Որ չի թռչի բարձր, երկար
Ախ ուրիշի թևերով։

ՈՒ՞Ր ԵՆ ԳՈՐԾԵՐԴ

Թե բռնես պոչից իրականության,
Շարժվես դու առաջ՝ հանուն ճոխության,
Թե փողը դարձնես գերբը աշխարհի,
Դառնաս գործիքը գործ-գործարքների,
Թե դառնաս հնարք ամենայն պահին,
Նստես խնջույքի թամադա-գահին,
Թե դառնաս խոսող հովիվ առաքյալ,
Որ ոչխարներին թվաս կատարյալ,
Որ քեզ հաչեցնեն, որ արժանանաս,
Որ ասեն՝ ապրես, որ դու գոհանաս,
Որ քեզ զարդարեն ոսկե շղթայով,
Որ ասեն դրախտ կմտնես փառքով,
Բայց լծակներդ _
Բայց գործարքներդ։

ՄԻԱՄՏՈՒԹՅՈՒՆ

Նեղածիր ուղի,
Փորձանք փորձություն,
Անօրենություն,
Հուսախաբությու՛ն։

Վիճակս է վատթար,
Ասացին՝ դու՛ ես,
Ու հպարտություն,
Ի՛նչ իմաստություն։

Բացվեց արշալույս,
Կանչեցի՝ ծու– դու,
Ու աղայություն,
Աքաղաղություն։

ՊՏՈՒՅՏ

Իմ վայրկյանը մի արբանյակ,
Պտտվում է առանցքիս շուրջ,
Տալիս է հարց մի գաղտնափակ,
Ու պատում է սիրտս տրտունջ։

Ամեն մի բան՝ մի բանի շուրջ
Պտտվում է, տալիս, առնում,
Այդ ու՞մ շուրջն ես պտտվում դու,
Այդ ինչո՞վ է սիրտդ վառվում։

Տես՝ նեյտրոնը ատոմին հեզ,
Տես երկիրը՝ արեգակին,
Արեգակն էլ իր սիրակեզ
Տաք շողերն է հղում երկրին։

Ու վայրկյանը ինձ արբանյակ
Պտտվում է առանցքիս շուրջ,
Կինս թխեց մի կարկանդակ,
Կերա, սիրտս լքեց մրմունջ։

ՆՈՒՆՈՒՇԻՆ

Ծիծաղերեսի լայնախոհությամբ,
Թափառակենցաղ թանաքոտ մտքով,
Զավզակության դեմ՝ անտարբերությամբ
Ելա ես ընդդեմ մարդկանց դիմակով։

Դժվարափոփոխ մեկին՝ սա ծառն է,
Ու շահապաշտին՝ սա կապույտ երկինք,
Ու պատասխանն էր՝ ասածդ դառն է,
Ախ, ինչ դժվար էր ճահճում դնել հիմք։

Շնագայլ մեկին կոչեցի նունուշ,
Կրականման էր, դարձավ սիրամարգ,
Սրեց ականջը... խոսքերն այդ անուշ...
Բայց թվացյալ էր պիտակն այդ անարգ։

ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Գործելու ձիրքը ինձ թե՝ ձեռնարկիր,
Չէ, ես չդարձա մուրճ-մանգաղակիր։
Դարձա հորինվածք ու հանդուրժամիտ...
Համոզկերությամբ ու ոչ միամիտ։
Ծիտ եմ, թե՝ դարձիր ցորենի հատիկ,
Բայց ես չդարձա կրկեսամարտիկ։
Թե՝ բարձր եմ քեզնից, դու ինձ հաճկատար,
Թե չէ կմնա միտքդ անկատար։
Վանեցի ձեռքը պարոն վնասի,
Հավասարներն են ընկերներ ասի։
Ես չընդունեցի միտքը տմարդի,
Պատրաստ, որ դառնար հորաքեռորդի։
Պատեց կասկածը այդ ե՞ս՝ հեղգամիտ,
Ախր ծնվել եմ մեծ հանճարամիտ։
Ու նշանաբանվեց «ես մարդ եմ» խոսքով
Այդ մարդուն ուսած մեծ հարցականով։

ԱՓՍՈՍ՝ ՉԵՄ ԿԱՐՈՂ

Ես բռնեցի հավագողին,
Կտրեցի պոչն աղվեսի,
Համոզեցի խոսք կրծողին,
Տարա դուռը կրկեսի,
Հեղեղեցի ջուր հրդեհին՝
Չար թշնամուն արտերի.
Տեսա նաև կատաղած շուն,
Կերավ խրատ տերտերի,
Գտնվեցի բայց ես անզոր
Ա՜խ, զինուժին երկրակալ,
Որ չեմ կարող խցկել դնչին
Մ՝ի կոշտավուն ռնգակալ։

ՎԵՐԱՄԲԱՐՁ ԿՌՈՒՆԿ

Դու ի՞նչ ես կպել հայ դատ կոչվածին,
Ո՞վ ես, որ դատես լավին ու վատին,
Լարերով քայլիր, կծափահարեն,
Կասեն պարծանքն է օլիմպի հրե՛ն,
Եվ իրոք ի՛նչ է կյանքը խարդավանք,
Ընկիր ճշմարիտ ուղին, իմանանք.
Տես՝ այնտեղ չկա չնչին չարություն,
Այդ ի՛նչ ասել է՝ գիտե՞ս հարություն,
Կամ չե՞ս ցանկանում ապրել հավիտյան,
Դուրս պրծնել ճանկից ընդդիմադրության,
Բարձրացիր երկինք, դարձիր ընդասեր,
Եղիր դու ազատ, միշտ քո գլխին տեր,
Լսե՞լ ես՝ կա կյանք, ուր սեր է միայն,
Ի՛նչ ես դու խառնում աշխարհը համայն,
Բացիր քեզ, ո՛վ մարդ, դեպ երկինք
միջանցք,
Չե՞ս տեսնում երկրին պատել է նստվածք,
Չխճճվեցի ուղում երկնամբարձ
Դարձա ես կռունկ
Այն էլ վերամբարձ:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Հողմը եկավ ու ձեռ առավ,
Ջարդեց իմ կահ-կարասին,
Պոկեց դեպ վեր, իր հետ տարավ
Տունս՝ շինված ավազին։

Ու ֆշշացրեց սուլիչ ձայնով
Ատամների արանքից,
-Չբողոքե՛ս հուժկու ձայնով,-
Ահազդեց ինձ վերևից։

Ու խորհեցի՝ կտամ դատի
Իր արարքը անարդար,
Թե՞ սովոր է մարդուն բռնել
Դատավորը մեր արդար։

ԱՆԱԿՆԿԱԼ

Դեմ-դիմաց օձ մի մարդախույս
Աչքը քայլիս, շվայտաբար,
Խլացնում է անդորրը ջինջ,
Դարձնում նրան խենթ, մոլագար։

Ու հայացքն իր՝ նշանակետ,
Իմ խառնված դեմքին հառած,
Ու խորհուրդն իր անմարդամետ
Դարձրեց ինձ ցից մի շվարած։

Սա ի՞նչ է, դե վերջ տուր խաղիդ,
Իրավունքը իմն է քայլքի,
Հրեն այնտեղ սպասում է ինձ,
Ես վարորդն եմ շոգեկառքի։

ՉՄԱՀԱՎԱՆ

Ներքնատեսության հայացքով լափող
Հակակրական էր,
Միամտության պարզասիրությամբ
Նա մանկական էր,
Ընտրեց ու ընտրեց երազայնության
Երջանիկ սիրով,
Երջանկացնողի ճամփան նշմարող
Սիրտն իր սիրատենչ...
Ու կրկին հայտնվեց մեկը, բայց ափսոս՝
Կեղծ-դասական էր,
Այն մեկն էլ, հուսանք, այն մյուսն էլ մի քիչ
Ավանդական էր,
Ընտրեց ու ընտրեց երազայնության
Երջանիկ սիրով,
Երջանկացնողի ճամփան նշմարող
Սիրտն իր սիրաբեկ,
Հակասական էր։

ԲԵՂԱՏԻՐՈՋ...

Ինձ մոտեցավ մի խոր հառաչ,
Ծանոթ մեկը՝ մի բեղատեր,
Իր սիրելի կնոջ առաջ
Կալանավոր, հայհոյատեղ։

Թե՝ տուր խորհուրդ, թե չկա սեր,
Չկա հարգանք, չկա, չկա՛,
Թե՝ տանում եմ ծառայի դեր,
Դա հանցանք է, Աստված վկա։

–Հանցատերը հանցագործ է,
Հանցագործը ունի իր տեղն,
Դու հոգնած ձի, կինդ՝ հեծյալ,
Էլ ինչիդ է սրածայր բեղ։

ԹՄԲԻՐՈՒՄ

Հիգիենիկ վարքից ընդմիշտ հեռացած,
Կյանքի հետ կապված բարակ մի թելով,
Ուժաթափ, տկար, անկամ, թալկացած՝
Իր իսկ արյունն է ծծում ասեղով։

Ոռնում է ինչպես երկոտանի գայլ,
Փախչում է, գտնում ավարը իր թանկ,
Առ՛, ոռնում է, դառնում մոլագար,
Աղերսում հաճույքն այն ազատարար։

Կին ու երեխեք՝ խեղճ ու հուսահատ,
Կյանքն է լքողին ոխակալ խաչում,
Բուռ նշխարի տեղ մեղքն էլ ճարահատ
Ջառանցանքի մեջ ափիոն է կանչում։

ԱՉՔԵՐԻՍ ՆԱՅԻՐ

Գիտեմ՝ արատ չես, խոսիր քիչ բարձր
Ու մի կրծկրծիր ասելիքը քո,
Լսում եմ մի կերպ՝ խոսքեր են քաղցր,
Էլ մի թաքցրու ճպճպոցը քո։

Բանսարկուի պես խոսում ես ցածր,
Խոսում ես ինձ հետ, նայում ուրիշի,
Բերեք բարձրախոս, որ հնչի բարձր,
Ջոկեմ՝ ի՞նչ խոսք է ու ի՞նչ մակնիշի։

Ու խոշորացույց բերեք, որ տեսնեմ
Բիբերը շեղող թաքնված հրեշտակին,
Բերեք մի գրիչ, որ հստակ գրեմ՝
Կարգիր քեզ ընկեր կոտրած տաշտակին։

Չունեմ ժամանակ զցող– բռնողի,
Սկզբից սովորիր դու հստակ խոսել,
Այնուհետ բռնիր փեշից նայողի,
Քանզի նմանիդ ես շատ եմ տեսել։

ԱՅՍՊԵՍ ԵՆՔ ԱՊՐՈՒՄ

Ընկերս է փորում ընկերների տակ,
Իսկ ես՝ ծառերի...
Տանտերս թաքնված գրպանիս մեջ ծակ,
Իսկ ես՝ պարտքերի...
Տնակս էլ ծաղկում ծաղիկների մեջ,
Իսկ ես՝ հարցերի։

ԲԱՑԱՍՄԱՆ ՕՐԵՆՔՈՎ

Շողոքորթի լեզվով անուշ
Ցավս երբեք դու չես տանի,
Հանգակտուր ծուռ բերանով
Ծանակությամբ փուշ չես հանի,
Ա՛խ, ծայրից ծայր հասցնողին
Թե երևաս դու ծաղրերես,
Երդմնազանց գրավատոմսով
Անտակ հորից քեզ չես հանի։

Երկնաշնորհ թե չլինես,
Երկրաքարից պատ չես շարի,
Թափառամոլ ժանգոտ կրքով
Գարնան խոպան արտ չես վարի,
Բուռ զկեռի համար դեռ խակ
Երեսծեծանք թե որ անես,
Հասուն բերքի քեզ երաշխիք
Բաժին թելեր չէ, չես մանի։

Չես երևա անշուշտ բարի
Խոռվարար մրոտ հոգով,
Ավա՛ղ, երկար դու չես պարի
Գարեջրից կախված փորով,
Թե բռնես պոչ թունդ երազի
Խենեշ նայվածք, թե ախր ե՞ր...
Մի սիրելի կգա, կանցնի,
Դու կմաշես հաստատ տարի։

Եղիր կայուն, որ չթռչես
Խռմփոցից անցնող դարի։

ԹԵ ՈՐ ՉՋՈԿԵՄ

Թպրտող լամպը վառվող արևից,
Վառ արշալույսը վառ մայրամուտից,
Ու մրոտ ծուխը հագեցած թույնով
Թե չտարբերեմ թևածող ամպից,
Ջինջը կեղծիքից, պարզը՝ քսվելուց,
Կամ թե հարգանքը մտածված տուրքից,
Չէ, չեմ հասկանա «բարեկամներիս»։

ԵՐԿՈՏԱՆԻ ԳԻՇԱԿԵՐԸ

Դարձիր՝ ասաց՝ իմ ընկերը,
Մատնացույցը ինձ՝ անմեկին՝
Ընկերացիր ներդաշնակին,
Եղի՛ր բարև մաքուր ձեռքին,
Դարձիր ընկեր հոգու գանձին,
Երազ կյանքում քո քաղցրանիրհ,
Որ քեզ հուշեն՝ ընկնում ես վիհ։

«ԱՍՏՂԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ»

Պարզաջրեց իր կոկորդը,
Չհասցրեց միտքը, ափսոս,
Եզրափակիչ իր ակորդը
Դարձավ լեզու պոռոտախոս։

Մի ամբողջ կյանք ձգտեց վերև,
Որ վերևից նայի ներքև,
Նայեց, մեկ էլ ուշակորույս
Ընկավ մի «հավք», պարզեց թևը։

Նստեց թևին, իջավ փափուկ,
Ու գովերգեց «հավքի» թևին,
Փորձն էլ կրկին մտքով ծածուկ՝
Ծանոթացիր բարձունքներին։

Թե տաղանդն է մեծ տմարդու
Միտքը դարձնում ծառան կուռքի,
Նա հիվանդ է իր աստղային
Բացխուփ ժամից, տակից ունքի։

ՄՆԱՍ ՀԵՌՈՒ

Հեռու՝ բաց դուռ ծեծողից,
Շահատակ բեռ դարձողից
Զմռան կեսին, թե գարու՛ն
Ծաղի՛կ, ծաղի՛կ կանչողից,
Մի աչքով թեք նայողից,
Թքես, անձրև կարծողից,
Լեզուն մեղր, սիրտը՝ թույն
Քիթ ու մռութ ցցողից,
Քուն ու դադար չունեցող
Օձը բնից հանողից։

ԵՂԵԼ, ՉԻ ԵՂԵԼ

Պայման, պայման անպայման,
Սուր–սուր խոսքեր անպատյան,
Անպակաս էր ոսկե սար,
Թե՝ կելնեմ որսասար,
Վագրի մորթի կբերեմ,
Փղի ոսկոր կշարեմ,
Մասնագետ եմ ալմաստի,
Թե՝ կբերեմ քեզ ոսկի,
Ռեկետ էի՝ տվեցի,
Այսինչից բանկ խլեցի,
«Տուրիզմ» կենտրոն բացեցի,
Մեկ միլիարդի քաշվեցի,
Թե՝ պատրաստ է իմ մակետ,
Կունենամ սուպերմարկետ,
Վերջում էլ թե՝ բաժակ լից,
Մի հինգ դոլլար պարտք տուր ինձ։

ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ

Հավակնության պահմտոց է
Ծառայական մեր ժամին,
Ամեն քայլի կոխկրտոց է,
Ամեն մեկից իր քամին։

Ելումուտ է խնդրակատար,
Կենսափորձ է անցորդի,
Դե սկսվեց, ես ձեզ սատար
Խաղ–բաժնետոմս-կցորդի։

Սեփականա-շորթում կորզող
Մի կանչ՝ ես եմ գանձապահ,
Լվացվում եմ, քաշվում մի կողմ,
Ինձ համարեք ձեռնպահ։

ԴԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ես հասկացա, օ՜, հասկացա՝
Ի՜նչ ասել է՝ ժամկերություն,
Երբ հանդիպեց մարդ-պատմություն,
Պատմել սիրող մի փորձություն,
Մի կեղծություն, մի նրբություն,
Մարսի վրա որսորդություն,
Հերոսություն,
Հերոսություն,
Կերած-խմած հացկերություն,
Վայրկյան խեղդող հանգստություն,
Իմաստություն,
Անմահություն,
Տորիչելյան դատարկություն։

ՑԱՎ

Խոսեց, խոսեց իմաստնացավ,
չգոհացավ.
Ուռավ, մեծացավ, շենացավ,
չբարկացա.
Բարձրացավ, զորացավ, ճաքճքեց,
չզարմացա.
Հասկացավ, բարկացավ, ձանձրացավ,
հեռացավ։

ՖՈՒՏԲՈԼ

Հե՛յ, ֆուտբոլ է, ցնծությու՛ն,
Կանչում են գո՛լ, խենթություն,
Երկու կողմից մարդկություն,
Պահանջում են հաղթություն,
Ու այստեղ էլ ուժը տեր,
Երկրագնդում այս անտեր,
Հաղթանակը՝ զորություն,
Զորությունը՝ հաղթություն,
Չլինի՞ թե այստեղ էլ
Ձարն է կանչում՝ մրցությու՛ն,
Մի տեղ սուգ է, տխրություն,
Մյուսում տոն ու ցնծություն,
Միջազգային փորձություն։

Ոչ թե մարդը մարդու դեմ,
Այլ համարն է կյանքի վեմ։

ԻՆՁ ԿԱՐԹՆԱՑՆԵՍ

Ողձախնդիր թե որ ընկնես ընթացուղի,
Թե միտքդ տաս երազներին մտապատրանք,
Ինքնամոռաց թե որ դառնաս մի ինքնընթաց,
Թե որ չազդի մայրամուտի շողը աչքիդ,
Թե չթրջի հորդ անձրևը լիատարափ,
Մրրկածեծ կարկուտն անգամ քեզ՝ նավակիդ..
Դողոցն անգամ քո ցրտերից...
Ու ճամփորդը ձեռքը պարզած...
Քեզ չարթնացնեն,
Բայց չբացվող օդապար-ից հանկարծ զարթնես,
Կարթնացնես ինձ։

ԷԼ ՉԵՄ ՀԱՄՏԵՍԻ

Խոսքի մանրոնը խոսքերի դաշտում
Չէ, չեմ նկատի,
Պատռված գործի շապիկը մաշված.
Կասեմ՝ պատրաստ չեմ ես կարկատելու,
Չէ, չեմ կոտրատվի.
Սիրաշահ նայվածք,
Քննադատ հայացք
Թե որ չանտեսեմ,
Ասեմ՝ տարվեցի,
Զոհ դառնամ եսի,
Բայց գոռոզության կաթիլը անգամ
Էլ չեմ համտեսի։

ՀՅՈՒՐ ԷԻ ՄԻ ՕՐ

Հյուրամեծարի վարքով բարեհաճ,
Քաղաքականի ժպիտով քծնի,
Ինձ հյուրընկալեց ոմն բարեկամ,
Թափեց իմ գլխին պարսավանքը իր։

Ասաց՝ այդ ինչու՞ չես գալիս ինձ հյուր,
Տեսնես նիստ ու կացն իմ բարեկեցիկ,
Տեսնես՝ ի՛նչ հարգանք ունեմ ամենուր,
Տեսնես՝ ի՛նչ հյուրեր ունեմ ազդեցիկ։

Ու հաշվեց գնած նոր թեյասարքեր,
Ցույց տվեց անթիվ գդալ արծաթե.
Ու զուգարանի նստատեղն էր լայն,
Աթոռներն էին անգամ երկաթե։

Ցույց տվեց նա ինձ գնած շոր ու շիրթ,
Խղճաց մտքում ինձ, որ չունեմ այդքան,
Ու համոզեց ինձ, որ քաղաքակիրթ
Իր ժամը թանկ է, կարևո՛ր այնքան։

Ինձ ճանապարհեց այն նույն ժպիտով,
Հյուր էի իրեն այնքա՛ն անարժան,
Դեռ ինչքա՛ն, ինչքա՛ն ունի անելիք
Իմ մերձավորը՝ այդքան հարգարժան։

ԹԵ ՉՈՒՆԵՆԱՍ

Թե ունենաս փող, բայց սիրտ չունենաս,
Չի փրկի փողը աղքատ ինֆարկտից,
Թե ունենաս սիրտ, հոգի չունենաս,
Չի փրկի սիրտդ հոգու ցնցումից.
Բայց թե սիրտ, հոգի ու փող ունենաս
Ու նաև հավատք, հավատ ամենից ...,
Բայց չունենաս սեր,
Ուրեմն չունես ոչինչ դու տալու,
Ուրեմն չունես ոչինչ տանելու
Դեմ-դիմաց կանգնած
Բովանդակ կյանքից։

Ի՞ՆՉ ՍՊԱՍԵԼ

Ի՞նչ պետք է սպասել նյութից զարմացած,
Ճեղքից ժանգաջուր կաթող ուղեղից,
Ի՞նչ ակնկալել չարիցը գերված,
Նրան ծառայող մաշված գործիքից։

Երբ զենք է միայն ոտքից մինչ գլուխ,
Այսօր իմ ձեռքին, վաղը՝ ուրիշի,
Խղճում եմ նրա մարմինն անգլուխ,
Այսօր իմ գլխով, վաղը՝ ուրիշի։

ՍԻՐՈ ԱՌԵՎՏՈՒՐ

Նվիրում է վախ, պահանջում է սեր,
Քարոզում է սեր, քաշքշում վարսեր,
Մերթ ոսկե աստղեր վերից խոստանում,
Մերթ ահաբեկում, իր մեջ խստանում:
Ու հանրությանը գոռում է՝ գիտցեք՝
Պիտի փախցնեմ, հա՛ մի զարմացեք.
Կպչում, համբուրում իր սերը սառած,
Լկտիություն է սա երես առած:

Սերը փոխադարձ իր կտուրի տակ,
Նա հասարակ է, պարզ է ու հստակ,
Սուրբ է, մտավախ ու հմայելի,
Իր մեջ ծովացող, ինքնին սիրելի,
Իր քաղցրությունից անպակաս չէ նա,
Բոլորի աչքին մատչելի չէ նա:
Իզուր հույսեր չէ, թևաթափ ուսեր,
Տագնապ, սպառնալիք, պատրաստի
սուսեր,
Էժան համբույր չէ, բռնության հաճույք,
Թուլակամ պահի ցանկության պիտույք:
Չէ, չէ, դա սեր չէ, այլ մի հանրատուն,
Ցինիկություն է, տաղանդ բնատուր,
Սիրո առևտուր:

ՏԻԿԻՆ ՄԱՆՐԷԱԿԵՐ

Օրը հազար անգամ սրբել,
Գնալ ու գալ, քսե՛լ, քսե՛լ,
Ծակուծուկից գտնել հոգսեր,
Թե մաքու՛ր եմ, ես՝ մաքրասեր,
Մի օրվա մեջ հարյուր կեցվածք,
Մի վերարկու՝ անթիվ լվացք,
Ու մի սրբիչ քսեց, քսեց,
Ներկած պատի հոգին մաշեց,
Հրե՛ն՝ այնտեղ մի մատնատեղ,
Նայիր՝ ի՞նչ է նստել այնտեղ,
Կրկին սրբիր, փախա՛վ, հասի՛ր,
Քսիր, քսիր ու բամբասիր,
Անցավ մրջյուն՝ նայիր՝ խոզ է,
Թռավ, բռնեց, չէ լոլոզ է,
Աչքս խփեց, թող լինի խեր,
Այդ ո՞նց մտավ թոզն այդ անտեր,
Է՛, իմ կյանքի մաքուր ընկեր,
Շուտով, շուտով դու կդառնաս
Մանրէակեր:

ԾՈՒԽ ԱՄՊԵՐ

Աքլորականչով անտառը զարթնում,
Մաղում է անձրև արևածագը,
Դաշտերն արթնանում ու լվացվում է
Քնից նոր զարթնած արտույտի ձագը։

Արևն է ցրում ամպերին գժված,
Կապում ծիածան անձրևանոցը,
Բացվում է հողը, ու համատարած
Անցնում է գործի ողջ մրջնանոցը։

Ու ինքնաթիռը երկինքը անցավ,
Թողեց կապույտին ծխի կույտերը,
Մի մրջյուն նայեց դեպ վեր սրտացավ,
Ասաց՝ դեռ շուտ է, հրե՛ն ամպերը։

ԳՈՅԱՊԱՅՔԱՐ

Ավազածածկ տաք ծովափին դեղնագույն,
Հողմահնար թմբին կառչած, խստավարժ
Ճանկռտում են իրար մրջյունն ու բզեզ՝
Փախցնելով իրար ձեռքից մի կորեկ։

Քաշքշում են անվերջ իրար՝ դարձած բեռ,
Փորվում է փոս մարտատեղում կատաղի,
Չկա միջնորդ, չկա մի ձեռք փրկաբեր,
Որ անջատվեն, լծվեն կյանքին նորովի։

Ու նայում եմ տեսարանին խղճալից,
Ու դառնում եմ ես անտարբեր ու անցնում,
Իրիկնադեմ հորդ անձրևի ավարտին
Մոտենում եմ մարտատեղին ես կրկին։

Դեռ շուռ գալով քաշքշում են իրարու,
Մարտատեղում փոքրիկ լիճ էր գոյացել,
Ու այդ լճում զզզզում են մեկմեկու,
Ջանք են թափում համեղ կերը յուրացնել։

Ու անցնում է ժամանակը վճռապես,
Ու խորհում եմ, ու խղճում եմ, բայց դե ի՜նչ,
Հասկանում եմ, որ դատ է պետք հիրավի,
Որ պայքարին այդ կատաղի դնի վերջ։

Բայց ո՞վ պետք է վարի դատը անսովոր,
Թե սկզբանե ումն էր հատիկը համեղ,

Թե այդ պահի պատճառ կորեկը անտեր
Ո՛նց է հասել մինչ մարտադաշտ՝ լեռնածեր։

Եվ կամ ո՞վ է նրան քարշել տանջանքով՝
Մրջյունը ժիր, թե՞ բզեզը անզիջող,
Կամ թե ո՞վ է վկան պահի սկզբնակետ,
Ախ, միգուցե կիսել է պետք երկու տեղ։

Այդ ո՞նց կիսեմ ես կորեկը պնդակող,
Ո՛ր օրենքով, որ չդառնամ հանցակից,
Լկտիացած ավազակին պորտաբույծ,
Որ չդառնամ հանցագործին կարեկից։

Չէ՛, չեմ կարող կիսել կերը հավասար,
Ես չեմ դառնա խաղաղարար անարդար,
Ո՛ր օրենքով արդար գործը անտեսեմ,
Քանզի պարզ չէ՝ ո՞վ էր քարշողը քանքար։

Բայց միգուցե կորեկը հենց սկզբնապես
Հենց իր տեղում էր նախօրոք, մինչ պայքար,
Ո՞վ է վկան, չէ, չեմ կարող հենց այնպես
Կազմել մասը կատաղի մարտին անհաղթ։

Իսկ միգուցե պոկեմ կորեկը անգին
Ու շպրտեմ ազնիվ վաստակը մեկի՞,
Չէ, չեմ կարող խլել կերը արդարի,
Ջուր չեմ նետի աշնան բերքը չարքաշի։

Ու արևն է կորչում սարի հետևում,
Ու խորհում եմ, ու խղճում եմ, բայց դե ի՜նչ,
Հասկանում եմ, որ դատ է պետք նորովի,
Որ պայքարին այդ կատաղի դնի վերջ։

Ու վեր կացա ես անկարող ու շշմած,
Արձանացա ես շվարած ու կարկամ,
Անտեսեցի, դարձա անզգա, անտարբեր,
Անցավ դաժան լուռ ժամանակը երկար։

Ու մթան մեջ վառեցի մոմ. լույսի տակ
Դեռ ճանկռում են՝ կպած իրար, մեկմեկու,
Ու թողեցի մարտը ահեղ ու անցա,
Ես պարտվեցի, ես հոգնեցի, հեռացա։

ԿԼԻՆԵ՞Ս ԺՈՒԺԿԱԼ

Հեռու շնորհքից կանխագուշակման,
Հեռու բացեբաց իմաստությունից,
Հայտնվեց խաղաղ փափուկ պատասխան՝
Հարցին՝ ինձ տրվող անհայտությունից։
Թե՝ ամեն ինչում կլինե՞ս ժուժկալ,
Որ ունենաս տեղ բաց երկնքի տակ,
Թե՝ դու կարո՞ղ ես մի քիչ շողշողալ,
Որ դու տաքանաս այս արևի տակ։
Թե ավել խոսեմ, կասեն՝ շատախոս,
Թե սնվեմ ավել, կասեն շատակեր,
Բայց թե շատ սիրեմ, օ՜, այստեղ մի պահ
Եկեք կանգ առնենք այստեղ, պարոններ։
Սիրել ընտանիք կամ թե հայրենիք՝
Կասեն՝ օրինակ այս քաղաքացին...
Իսկ թե, ո՜վ գիտե, մի հիվանդ կարծիք
Կասի՝ ինձ դուր է գալիս այս բադին։
Չէ չի հասկանա սերը ժուժկալին,
Մի բաժակ ժուժկալ թե որ ես խմեմ,
Կծագի մեծ հարց իմ աշխարհիկին՝
Թե սերը սիրվե՞ց, մի հատ էլ խմեմ։

ՊԱՀՄՏՈՑԻ

Այս որտե՞ղ եմ, անտեսեցի,
Կանգնած մեջտեղ նեղ փողոցի,
Ու ամպրոպվեց, տեղաց անձրև,
Զգացի կարիք տաք ծածկոցի։

Ի՞նչ ես կանգնել ուսերդ վեր
Տոթ-լոգանքում ես նեղվեցի,
-Չքվի՛ր, դու գող, իմ տարածքից,
Լսեցի ձայն շան հաչոցի։

Բայց դե ամառ, ցուրտ ու խավար,
Անհաշտ պահ է սրտխառնոցի,
Քաշի՛ր քոնն են գույներ-ավար,
Զգացի կարիք կոշտ ձեռնոցի։

Մանկազվարճ լռության մեջ
Արծարծվելով անտեսվեցի,
-Մենք այստեղ ե՛նք,– կանչ է կողքից,
Ծանոթ խաղ է պահմտոցի։

ԱՓՍՈՍ

Բարեհամբույր մի եղնիկ՝
Գեղեցկուհի մի անցավ,
Կանգնեց, շրջվեց կանգառում,
Թվաց՝ նայեց, շիկացավ։

Երանի՜ իր սիրածին,
Որ այդքան հեզ, հաճելի...
Նրբին վիթին երկրածին,
Իր աչքունքին գեղանի։

Պայուսակը ոսկեզօծ
Բացեց փութով նազելին,
Հանեց մի տուփ ծխախոտ,
Ափսո՜ս անուշ հմայքին։

ԶՐՀԵՂԵՂ

Քամին օրորում արտերի ոսկին,
Արևն է նստել խոնարհ հասկերին.
Հողը ճաքճքում ծարավից ամպի,
Մեծ նռուզեռ է չարքաշ մկների։
Կառուցվող տունն է քանդում ընդերքը,
Հասկերից լցվում տարեկան բերքը,
Ջահել մկներն են հոգով աշխատում,
Ու մուկն է ծերուկ գոհ-գոհ փնթփնթում
Բեղերն է շարժում, աջ ու ձախ ժպտում.
«Թոռ ու ծոռան հետ քեֆ կանեմ ներսում,
Բերրի է տարին, պահեստը լիքն է,
Կարևորը դա մեր ուտելիքն է»։
Ու չհասցրին փակվել խեղճերը,
Երբ որոտացին բարձրում ամպերը.
Թափվեց դույլեդույլ, ջրհեղեղ է մեծ,
Խուճապը պատեց, պահ է դառնահեծ.
Լցվեց ամբարը գարշ կեղտաջրով,
Դուրս էին պրծնում մկները զոռով,
Ջորսկողմ լաց ու կոծ, ահ համատարած
Գոռում-գոչյուն է, ծով մահատարած.
Մկներն են ճչում, փնտրում բարձր լեռ,
Հասկ-փչակներում ձեռքները դեպ վեր,
Ալեհեր մուկն էլ՝ Տեր, դիմում եմ քեզ,
Այդ ո՞նց դու տապան չձգեցիր մեզ։

ՕԼԻՄՊԻԱԴԱ

Աշխարհ՝ փոքրիկ ջահ դարձած,
Ձեռք՝ աշխարհը վեր տանող,
Անշեջ կրակ հույսերի,
Հրճվանքի դող մի անդեմ՝
Երազանքը թևածած.
Շարք շեփորներ՝ զիլ հնչող,
Օլիմպոսի շանթեր խենթ,
Սև ու սպիտակ ու դեղին,
Ծնվում նորից, մի «մորից»,
Դրախտ խորհուրդն է երկնից
Իջել վերից, էն ծերից։

* * *

Թե որ ճահիճ՝ անցանելի,
Թե հաղթանակ՝ թող անարյուն,
Թե բարի լուր՝ անսպասելի,
Երջանիկ կյանք հարակայուն։

* * *

Եթե կռունկ ես, այն էլ հուսալի
Մ՛ի ներկայացիր անմեղ աղավնի։

* * *

Կոտրված մարդը կոտրված վարդ է,
Նա թառամում է, ապրածը ջարդ է։

* * *

Մարդու վրա հույս դրեց,
Հույսը կտրեց, ջուր կտրեց։

* * *

Ն ուռը հասել է, կեղևն է ճաքել,
Ա՛խ, սիրահարիս շրթունքն է ճաքել։

* * *

Ծանր էր ուսիս, տես՝ ինչ ուժ է,
Ընկավ-ջարդվեց, ասին՝ խուժ է.
Ինձ մատնացույց... փշրեց, գիժ է,
Բայց ջարդվածը հոգեբույժ է.

Աշխարհ անցած ու հասկացած,
Որ այս կյանքը դատարկ կուժ է։

* * *

Կանգնեց իմ դեմ մի ածան հավ
Ու կչկչաց ինձ՝ քաղցածիս,
Մի պահ լռեց, հպարտացավ,
Պահանջեցի կատարել բիս։

* * *

Ամպից թռած բոցը կայծ է,
Քարը թռավ, տես՝ քարայծ է,
Կյանքը թռիչք, մարդը՝ մեղու,
Կծան խոսքը սրտում խայծ է։

ՄՈՍԿՈՎՅԱՆ ԽՃԱՆԿԱՐ

ՄՈՍԿՎԱՅԻՆ

Ստեղծագործ էր Դոլգորուկին,
Հիմնեց քաղաք իշխանական,
Նոր շունչ ու թափ տվեց ռուսին,
Կերտեց մի բերդ սլավոնական։

Ու գետափին կանգնեց պարիսպ,
Ճառագեցին գմբեթները,
Ու ճչացին ինչպես մանուկ
Նորահնչյուն զանգակները։

Ազատության հուժկու զարկով
Համախմբեց զավակներին,
Ու դուրս մղեց իր տարածքից
Թաթար-մոնղոլ հորդաներին։

Եկան շվեդ ու լեհացին,
Մատը կծեց Նապոլեոնը,
Եկան թուրքը, գերմանացին,
Իր դեմ դողաց Վաշինգտոնը։

Բայց դե օրը հիվանդագին
Բերեց ներսից խժռող ցավը,
Փոթորկալից օվկիաններին
Լքում է ղեկ, հանձնում նավը։

Քրքրում է ներսը, կրծում,
Մաֆիան դաժան դրոշակակիր,

Այն աշխարհն է նա ուղարկում
Լինի լրագրող կամ թե բանկիր։

Ինքնահալած՝ նման քամու,
Գլորվում է ինչպես մի գունդ,
Հե՛յ, բռնեցեք սանձը ձիու,
Նա վազում է դեպի անդունդ։

ՉԵՄ ՑԱՆԿԱՆՈՒՄ

Այս խաբկանքում հրդեհ մարող
Հերոս դառնալ չեմ ցանկանում,
Հրդեհակեզ կրճտոցում
Հրեշտակ կոչվել չեմ ցանկանում,
Չեմ ցանկանում, որ ինձ ասեն՝
Հումանիստ է ու փրկարար,
Մատնանշեն՝ հրե՛ն, հրե՛ն,
Սովյալներիս մի խոհարար:

Այս քառսում խիստ խառնակիչ
Անբառ մնալ չեմ ցանկանում,
Մարդակործան կոխկրտոցում
Առաջ անցնել չեմ ցանկանում,
Չեմ ցանկանում՝ ինձ բարեխիղճ
Կոչեն՝ սա է մեզ փրկարար,
Մատնանշեն հրե՛ն, հրե՛ն
Անտուններիս տեղ բավարար:

Այս բորբոսում ցավ տարածող
Վարակ լինել չեմ ցանկանում,
Գավազանի մեկ հարվածով
Կյանքը բուժել չեմ ցանկանում,
Ես փախչում եմ, Աստված ձեզ հետ,
Այս անաստված պահմտոցից,
Ալան-թալան տուրդմփոցում
Նշխար կորզել չեմ ցանկանում:

ՄՈՍԿՈՎՅԱՆ ԽՐՈՆԻԿԱ

Զարթնեցի քնից մի շան հաչոցից,
Նրան հաջորդած մոծակ-խայթոցից.
Խավար ու լուռ է, իմ միտքը կուռ է
Ծոծրակիս ուժգին մտրակ-խփոցից։

Թե ի՛նչ ես ընկել անգործ եզան պես,
Լալկվե՞լ է լեզուն քո եզոպոսյան,
Քո հարևանի դուռն է դառնում կես,
Թալանն է դառնում բուրգ եգիպտոսյան։

Չե՞ս տեսնում արդյոք փողոցի ծերին՝
Թե ոնց խփեցին դանակով մեկին,
Չե՞ս լսում արդյոք՝ բռնաբարում են,
Վերևից ո՛նց է հեծկլտում մի կին։

Տեսել եմ, լսել ճչող քանիսին,
Դարձել էր ձեռքս փրկիչ մի վայրկյան,
Հանցանքի հետև օրենքն էր թաքնված,
Դարձա ես բաժին սադրանքի արյան։

Այնժամ մթնեցին բիբերս այրվող,
Էլ բաց աչքերով ոչինչ չտեսա,
Չդարձա հրեշտակ բոլորին հասնող,
Որպեսզի կոչվեմ մեկին լավ փեսա։

ՔԱՎՈՒԹՅԱՆ ՆՈԽԱԶ

Երեկ երկիրն այս խաղաղ
Դարձավ այսօր կռվատեղ,
Վերափոխվեց անհապաղ
Նոր առևտրում խելահեղ։

Սրաթափանց հնարքով
Նորմուծություն խնդրեցի,
Նորաճանաչ հավատով
Նյութապաշտին խայթեցի։

Նորաբան եմ՝ ասացի,
Շուկա կյանքում սաստեցին,
Նշկահեցի մեր օրին,
Ինձնից նոխազ սարքեցին։

ԱՅՍ ԵՐԿՐՈՒՄ

Արխայիզմ չէ, անարխիզմ,
Որովհետև այս երկրում,
Թողած հետև կոմունիզմ՝
Իրար միս են համակրում։

Վերևներում հղփացած
Գողանոց է կուշտ, անկուշտ,
Ներքևներում ընկճված
Խեղճ ու կրակ ժողովուրդ։

ԹՈՀՈՒԲՈՀՈՒՄ

Երկնակարկառ դիզված հարցեր
Հաշվարկում են, քննարկում,
Իրար անսիրտ հոշոտում են
Հալածական այս երկրում:

Սիրում, հրճվում, երազում են
Կատակում են, կտակում,
Հուսախաբվում, տառապում են
Մարդահալած այս երկրում:

Ու սպասում են փրկարարին,
Իսկ գալուստը երկարում
Հողի կռիվ, շահի կռիվ
Ալան-թալան այս երկրում:

ԿԱՊԻՏԱՆ ՎՈԼԿՈՎ

Լսում եմ ես քեզ, պարոն ոստիկան,
Ենթարկվում եմ քեզ, կապիտան Վոլկով,
Քանզի կրում ես ուսիդ աստիճան,
Մեկ, երկու, երեք, ու մինչև երկինք,
Քանզի վերևից, կողքից, ներքևից
Բոլորն էլ կողմ են քո աստիճանին,
Քանզի աշխարհիկ օրենքն ես արդի,
Ե՛վ ավազակ ես, և՛ գող բռնողը,
Ե՛վ պահապանն ես հասարակության,
Հասարակության ջերկիրն ես լկտի,
Երբ որ անմեղին կալանողն ես դեռ,
Հանցագործի հետ բաժակ խփողը,
Երբ որ աչքերդ չռված, անհամբեր
Անվերջ սպասում են, որ քեզ ընծայեն,
Երբ տարար վերջին կոպեկը ինձնից,
Որ քո սադրանքին չդառնամ ես զոհ,
Երբ ուսադիրդ ես պարզում անճարին,
Իսկ փող նետողին ժպտող ժանիքդ.
Ախ, ո՞նց կարող եմ ես քեզ չենթարկվել,
Երբ որ կարող ես օդից գործ սարքել.
Թե քեզ նմանը պիտի կարգ պահի,
Թքած ես ունեմ քո լպիրշ դեմքին.
Այս պետության դեմք
Զորեղ ոստիկան
Կապիտան Վոլկով։

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ի՜նչ ես դարձել դու անտարբեր,
Դու չե՞ս տեսնում երկրիդ հալը,
Երբ օրենքն է երկդեմ փքվել,
Խաղում անվերջ լկտի խաղը։

Դե պայքարիր օրենքի դեմ,
Գավազանով փշրիր գանգը,
Որ չխաղա խաղը քո դեմ,
Որ զիլ հնչի հոգուդ զանգը։

Հնչի զանգը աշխարհով մեկ,
Որ էլ չկա աշխարհիկը,
Որ առյուծի հետ կխաղա
Փոքրիկ, թմբլիկ սուրբ մանկիկը։

Թե չես կարող դու կյանք շտկել,
Թե չես կարող դրախտ բերել ետ,
Մի՛ պատրաստվիր երկար խորհել,
Երբ խաղաղ չես օրենքի հետ։

«Երբ օրենքն է քեզ բռնանում,
Երբ օրենքն է թալանում դեռ,
Հանգիստ նստիր դու օդանավ,
Անհետադարձ բարձրացիր վեր»։

ԲԱՐՔԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐ

Աշխարհը դարձել մի մեծ գործարան,
Ու ծուխ են ծխում,
Առնում գործարան՝ էյ հե՛յ, լսեցեք՝
Աշխարհ ենք ծախում։
Այստեղ ուրիշ է կարգը գոյության՝
Այս առ ու ծախում,
Վաշխառուները՝ կախաղաններից
Աշխարհ են կախում։
Ու էլ ոչնչից ես չեմ վախենում,
Թե լինի բախում,
Առաջվա նման սիրտս մորմոքից
Էլ չի բաբախում։
Էլ չի տրորվում այս ոտնակոխում,
Այս ճահճախորքում,
Թե որ ես մնամ այս «ԳՈՂ» քաղաքում,
Թե որ ես մնամ այս գարշ փարախում,
Շուտով կկոչեն ինձ մեծ արնախում։

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ

Երկնեց հոկտեմբեր՝ փառք առաջնորդին,
Ապրեց ցնծության պահ հաղթանակը,
Հանուն լուսավոր պայծառ գալիքի՝
Կեցցե՛ առնական պրոլետարիատը։

Կախվեց պատերազմ մի եղբայրասպան,
Անցավ իր գործին լիրբ պրոպագանդը,
Կախեց կարգախոս վզից անդավան,
Կեցցե՛ աննահանջ պրոլետարիատը։

Պրովոկատորը փնտրում էր առիթ,
Իր մեջ, փողոցում պատրաստում դատը,
Ընկնում էր գիրկը որոնումների,
Կեցցե՛ անսասան պրոլետարիատը։

Երկիրը դարձրեց բանտ ու աքսորներ
Ժողովրդական կոմիսարիատը,
Արյունով ներկեց մահվան ճամբարներ,
Կեցցե՛ անկոտրում պրոլետարիատը։

Ու հետնորդները՝ կաշիներ փոխած,
Գոռացին՝ կեցցե՛ վեհ դեմոկրատը,
Վեր բռունցքներով գոռացին՝ կեցցե՛
Վերակառուցվող պրոլետարիատը։

Ինչ-որ մանեկեն բարձր ամբիոնից
Ճառում է, պարզում կեղծ ցուցամատը,

Աշխատավորի տանջված անունից
Գոռում է՝ կեցցե՜ պրոլետարիատը։

Մաշված ու տկար, խաբված ամենից
Քայլում է լքված խեղճ հուսահատը,
Հավաքվել, կախվել կարգախոսներից
Իր շունչն է տալիս պրոլետարիատը։

ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Փլվեց կայսրության տասնհինգ հարկը,
Թափվեց իր գլխին իր տալիք զարկը,
Դարձավ մուրացկան. կապիտալիստից
Մուրում է անվերջ իր բաժին վարկը։

Ու ընկերները դարձան պարոնայք,
Փոխեցին կաշին կոմունիստները,
Կաշառակերի կոկորդով գոռում՝
Պաշտպանենք մարդու իրավունքները։

Թոշակառուներ՝ ամենուր լքված,
Ու դատն են վարում հանցագործները,
Մի ողջ երկիր է սովի մատնված,
Ուռչում են մի բուռ «դեմոկրատները»։

Խլուրդի նման սողում են, սողում
Դեպի ղեկավար թափուր տեղերը,
Գոռում են՝ առաջ, դեպ նոր ընտրություն
Լկտի ու անբան անտաղանդները։

Ի՜նչ արած, սա է այսօրվան հարմար,
Մեր կողմից բացված նեղ ուղիները,
Մենք բացողն էինք, մենք էլ քարշ կտանք
Մեր ուսին բարձված կյանքի խաչերը։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Այս բիրտ երկրում ինձ ասացին՝
Տեղդ շեպ է, ունե՞ս կարիք,
Հրավիրեցին իրենց հացին
Ու փորձեցին դարձնել կնիք։
Ինձ փորձեցին դարձնել նստիք,
Բայց նայեցի աչքով արծվի,
Ու դրեցին դեմս նպար՝
Կբարձրացնի կենաց պատվի։
Է՛հ, հասկացան, էլ ի՛նչ կարծեն,
Որ քաղում եմ ես շարմ-աշուղ,
Եփում, կենաց հյութն եմ խմում
Ու դառնում եմ բացսիրտ աշուղ։
Ու թափեցին իմ դեմ փողեր,
-Արի՛, մերն ես, -կամաց ասին,
Կծառայեն քեզ մեր փղեր,
Կպատկանաս «վերին դասին»։
Կկպցնենք հարմար պիտակ,
Ոսկե շղթա՝ վզիդ հարմար,
Ու կչրթես ընտիր պիստակ,
Քեզ կկոչեն հարգամեծար։
Խնդրեմ՝ դիմում մի անհասցե
Առաջարկին այդ ջարդուբուրդ,
Օ՛, թող Աստված մի արասցե՝
Գտնվի մեկը՝ մի անխորհուրդ։

ՉԷ, ՉՀԱՍՏԱՏՎԵՑ

Իրատեսական ապարդյուն ճիգով,
Չափանիշներով առևտուրների,
Շահադիտական մատուցումներով,
Չէ, չհաստատվեց դիրքորոշումն իմ:

Աջից օրենսդիր, ձախից՝ դավադիր
Առաջարկներով հանցագործների,
Լինե՞լ ղեկավար գաղափարակիր,
Չէ՛, չհաստատվեց դիրքորոշումն իմ:

–Այս աղքատ երկրում հարուստ կլինես,
Կդառնաս մտրակ սուրծայր խոսքերի,
Ասին՝ մի ձկից հազար կսարքես,
Չէ, չհաստատվեց դիրքորոշումն իմ:

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐԱՆՆԵՐՈՒՄ

Արդարության ճգնաժամում
Հակասական սկզբունքներ.
Չորս կողմ խոտոր ակնկալում,
Չորս կողմ անճար հայացքներ։

Գործարարը՝ «հայրենասեր»,
Գործազուրկը՝ ծանր բեռ,
Մեկնաբաններ, ասուլիսներ,
Սայլեր անշարժ ու անտեր։

Դե ի՛նչ, հա՞րկ կա բարգավաճել,
Երբ գրպաններն են ժլատ,
Արդյոք հա՞րկ կա բացահայտվել,
Երբ դիրքերն են անհաստատ։

Է՛հ, ապահով ի՛նչն է հիմա
Անցանկալի այս խաղում,
Թե կենսական է հիմա նա,
Ով որ գործ է ծավալում։

Թե գործընթաց է, դիմացե՛ք,
Ճակատներդ պահեք վեր,
Թե պարզորոշ, հաստատ եղեք,
Մի՛ փորեք փոս, շուտ է դեռ։

Արդարության ճգնաժամում
Ելակետվող սկզբունքներ,
Չորս կողմ խուճապ, ակնկալում,
Չորս կողմ անուժ հայացքներ։

ԻՆՉԵ՛Ր, ԻՆՉԵ՛Ր

Այլ կերպ ասած՝ մայրամուտ է,
Դարանամուտ, դարամուտ,
Այլ կերպ ասած՝ արդեն մութ է,
Կյանքը բութ է, մարդն անգութ։

Այլ կերպ ասած՝ բերրի երկրում
Սովահար է աշխարհը,
Այլ կերպ ասած՝ շահի երկրում
Մահանում է անճարը։

Այլ կերպ ասած՝ անսանձ ձիու
Խրտնած վազք է մարդաճի,
Այլ կերպ ասած՝ զինամարտը
Ինչե՛ր պիտի տարածի։

ՊՏՏԱՀՈՂՄ

Հստակ լեզվով թորգոմյան
Եկա՝ ասեմ թե՝ կանգնեք,
Ամեն թռչող մի վայրկյան
Միանձնաբար նվիրենք.
Ստեղծված գոյին նախնական
Խռովարկու մեր ժամին
Խստացուցիչ միտումով
Սվվաց հանկարծ սուր քամին։
Պոկեց ծառեր արմատից՝
Իբրև փրկվեք դեհ դատից,
Ջարդում դուռ ու լուսամուտ,
Փոթորիկ է, ժամը մութ,
Էյ հե՛յ, գոռում ու գոչյուն,
Դարձավ կտուրը թռչուն,
Արմագեդոն վերևից,
Հարայ-հրոց ներքևից,
Մարդը դարձավ շվարած՝
Անճար, անհույս արարած,
Ու ահազդու կայծակ–հուր,
Ճիչ, վայնասուն ամենուր,
Պայթուն մի ձայն ասաց՝ ես
Տե՛ս քո գունդը կանեմ կես
Կայծակ, անձրև ու ամպրոպ,
Մարդը դարձավ մի հոպոպ,
Խղճացի այս քաղաքին,
Իր ռազմական մեծ փառքին,

Որ աղերսում գոյություն,
Աղերսում է փրկություն,
Մարդիկ ծվում ու ճչում,
Չգիտես՝ ուր են փախչում։

Հստակ լեզվով թորգոմյան
Եկա՝ ասեմ ոնց բանբեր,
Խստապահանջ այս ժամին
Հայացքներդ դարձրեք վեր։

ԱՎԵՏԻՍ ԵՐԿՆԻՑ

ԱՍՏՂԵՐԻՑ ԱՆԴԻՆ

«Մեծ պայթյունից» անթիվ լույս,
Անթիվ աչքեր շողշողուն,
Համակարգեր ցիրուցան,
Պտղոմեոսյան փորձեր զու՛ր
Տիեզերական օվկիանում
Լողում նավեր գաղտնակիր,
Պտտվում են ու ձգվում
Ստույգ պայմանով անխտիր։
Իսկ ո՞վ կասի՝ կա՞ «մեծ պատ»՝
Անդին ժամ ու տարածքից,
Կամ եղե՞լ է պայթյունն այն,
Ո՞վ է վկան այն պահից։

Կռու-կռու մի ընկույզ՝
Ջարդող՝ անթիվ-անհամար,
Անքուն տանջանք ու մորմոք,
Մի չջարդվող գաղափար։

Ո՞Վ Է ՍՏԵՂԾՈՂԸ

Սարեր, ձորեր, անտառներ,
Գետեր, ծովեր, օվկիաններ,
Անթիվ զույգեր սիրաբորբ,
Արև, անձրև ու ամպրոպ,
Մի ընտանիք՝ բազմանդամ՝
Ադամ, Եվա, Սեմ ու Քամ,
Սրբազան հաց ու գինի...
Ո՞վ է ստեղծողն ամենի։

ՄԻ ՓՈՐԱՉԱՓ ԽՈՍՔ

Ասում են՝ կգա ոսկե ժամանակ,
Որին կանվանեն սուրբ հազարամյակ,
Չի լինի չարը, կլինի ծով դրախտ,
Կգործի Տիրոջ օրենքը անխախտ,
Կապրի դրախտում խաղաղ, երջանիկ,
Առողջ, համերաշխ մի մեծ ընտանիք,
Ու կապրի մարդը կյանք անմահական,
Նա կժառանգի երկիր նախնական։

Մի իշխանավոր՝ փող ու փորալի,
Կլինի այնժամ հաստատ ձանձրալի։

ՄԱՐԴՈՎ ՄԱՐԴՈՒՆ

Աստված Ադամով ցրեց, տարածեց
Արյունը քանի հազար տարելից,
Արևը կյանք է տալիս ամենքին,
Գո՛ղ ես, ավազա՛կ՝ չի հարցնում վերից։
Այդ չարն էր դաժան ու հաշվեհարդար,
Որ կտրեց մարդով մարդուն արյունից,
Դեռ մարդով քանդում, պղծում է աշխարհ,
Դեռ մարդով մարդուն կտրում արևից։

ՈՒ՞Ր ԷԻ

... Ու պատրաստ էր մի պճնանք
Իմ գալուստին ընդառաջ,
Շշնջացի Եվային՝
Այդ ո՞վ ձգեց մեզ դրախտ.
Այդ ո՞վ տվեց ցանկություն,
Թե՝ տարածիր մարդկություն։
Ու դեռ չկար այնժամ կեղտ,
Երբ սիրածս ձգեց մեղք,
Ծնեց ցավով, կանչեց՝ ախ,
Տեսա, ներսս ընկավ վախ,
Վա՜խ, մեր օրին, ի՜նչ է սա,
Մեկը մեկին կորսա,
Ու բարդում են իմ գլխին
Ներկա մեղքեր ցավագին,
Թե՝ երբ խաբվում էր մի կին,
Ու՞ր էիր, ու՞ր այդ պահին։

ԱՎԵՏԻՍ

Այո, կրկին փետրափոխվեց
Աքաղաղը–դարավերջ,
Կերկերուն կանչ՝ լույսը բացվեց,
Ծույլ-ծանծաղին կգա վերջ։

Չի հանդուրժի դարասկիզբը
Շնչակտուր այդ կանչին,
Այդ մինչև երբ դաժան իզմ-ը
Պիտի պայթի իր դնչին։

Երկրորդ անգամ աքաղաղը..
Պատեց սարսուռ տկարին,
Ո՞վ կզոջա իր մեղք-վաղը,
Կնախատի անցյալին։

Երրորդ անգամ... խորհեց կաղը՝
Քանի՛ Պետրոս պիտ ծնվի,
Անհամ ճաշին լցնի աղը,
Տկար հոգին որ սնվի։

ՆՈՐԱՑՎԱԾ ՀԻՆԸ

Նորացումի ճանապարհին
Իմ թատրոնի՝ դեռ նորատի,
Հնադավան բեմ-հարթակին
Նորաբանին ես ընտրեցի։

Ու իր դերը մեր վայ օրի
Երկնագույնով պատկերեցի,
Անտեսեցի հնամոլին,
Սակայն հինը հաստատեցի։

Առ այն, որ կա ժամը ընտիր,
Արդար դուռը մարդ-փրկության,
Պատրաստ՝ ընդդեմ կեղծապատիր
Կյանք կրծոտող ծամածռության։

ԱՐԺԵ ԱՊՐԵԼ

Ծնվել, որ մեկը քեզնով հիանա,
Խոսել, որ մեկը քեզնով լիանա,
Քայլել՝ այս կյանքը անցնելու համար,
Խորհել՝ իմաստը փնտրելու համար,
Ապրել՝ խույս տալու վարքից անվայել,
Ապրել՝ ապրելով անվերջ պայքարել,
Ապրել՝ թող ախ-ով, թեկուզև՝ վախով,
Ապրել՝ թեկուզև ծով տառապանքով,
Ապրել՝ բայց կյանքում միշտ սովորելով,
Ապրել՝ բայց մեկին երջանկացնելով,
Ապրել՝ ապրածդ թողնելու համար,
Ապրել՝ հավատքով փրկվելու համար,
Ապրել գաղտնիքով, ապրել խորհրդով,
Ապրել թռռ-ծռռան ու միայն, միայն
Արարչի փառքը երգելու համար։

ԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱԶԱՆՈՒՄ

Իրավասու էր օղակը այն նեղ,
Որ կրակ էր մի, և անցա մի կերպ,
Ու ոլորտները, որ այնտեղ մի տեղ
Ասացին կա տեղ՝ սրտին համակերպ։

Արդարացվա՞ծ է պայքարը վերից՝
Հանուն պարզության ու կտոր հացի,
Նախագծված են՝ լսում ենք Վեհից,–
Զուլալ օրերը ձեր նիստ ու կացի։

Կշեշտեմ ուժը ծերացած խոսքի՝
Որ հավիտյանն է հորիզոններում.
Ավետում է մեզ, որ պիտի ծաղկենք
Ոսկե օրերի ավազաններում։

ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ես Տիրոջ փառքն եմ ճանաչում միայն,
Ես իր առջև եմ խոնարհվում միայն,
Իր իսկ ստեղծածից գաղտնիք չպահող,
Բայց գաղտնիքներն եմ ճանաչում միայն։

Ես ճանաչում եմ հզորությունը
իր հավերժ ուժի,
Ես հասկանում եմ խորիմաստ միտքը
կուտակված մուժի,
Ինչքա՛ն էլ անհույս, ինչքան էլ անճար,
բայց ճանաչում եմ
Իր բազմահանճար փրկարար ձեռքը
սուրբ հոգեբույժի։

Ես ճանաչում եմ երջանկությունն իմ
իր ձեռքում պահված,
Ես ճանաչում եմ հաջողությունն իմ
իր իսկ նվիրած,
Նաև իմ աջն եմ ճանաչում՝ մեկնած
բուռ սիրո համար,
Իր անհուն սիրո ջրավազանից
իմ մեջ պահպանված։

Ես Տիրոջ փառքն եմ ճանաչում միայն,
Ես իր առջև եմ խոնարհվում միայն,
Ինչքա՛ն էլ կյանքը մութ, անտանելի,
Իր նպատակն եմ ճանաչում միայն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա Հ Ա Զ Ա Ն Գ

ԴԱՐԱԾՆՈՒՆԴ---------- 3
ԱՅՍՕՐ ԱՎԵԼԻ ---------- 4
ՍԹԱՓՈՒԹՅԱՆ ՃԻԳ ---------- 5
ՌԱԶՄԱՐՇԱՎ ---------- 6
ԾԱՆՐԱՔԱՅԼ ՊՏՈՒՅՏ---------- 7
ԴԱՐԱՄՈՒՏԻՆ ---------- ----------8
ԸՆԴՎԶՈՒՄ ---------- -9
ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԴԻՈՆ ----------10
ՀԵՌԱԿԱ ՀԱՅԱՅՔ ----------11
ԻՐԱՐԱՆՑՈՒՄ ---------- -12
ԱՇԽԱՐՀԻ ՏԵՆԴԸ ----------13
ԱՐՄԱԳԵԴՈՆ ----------18
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁԻ ՀՈՒՅԶ ----------19

ՉՓՈԽՎԱԾ ՊԱՏԿԵՐ

ԱԴԱՄԻՆ ----- — ---------- 21
ՄԱՐԴԸ---------- 22
ԵՐԱՆԻ ՏԱՄ---------- 23
ՀՈՒՍՈ ԴՈՒՌ ---------- 24
ՇԱՀԱՐԿՈՒՄ ---------- 25
ԱՅՍ ԿՅԱՆՔՈՒՄ– ---------- 27
ՈՒՏՈՊԻԱ ---------- 28
ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ---------- 29
ՀՈԳՈՒ ԱՉՔԵՐՈՎ ---------- 31

ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ---------- 32
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ---------- 33
ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ -------
-ԿԱՐԳԱԽՈՍՈՎ ---------- 35
ԵՍ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ ---------- 36
ԵՍ ԱՍԱՑԻ Ո'Չ ----------37
ՈՒԹՅՈՒ՛Ն, ՈՒԹՅՈՒ՛Ն ---------- 38
ՓՈՂԸ---------- 39
ԳԻՆԵՀԱՄ ԽՈՍՔ---------- 40
ՓԱԿՈՒՂՈՒՄ ---------- 41
ԳԱԼԻՔՈՒՄ ----------43
ԹՌԻՉՔ---------- 44
Երազում ... ----------45
...հայտնվեց մի գեղեցկուհի,---------46
...սառցե մի գեղեցկուհի----------47
Կապտաճերմակ թևավոր ---------- 48
ԽԱՂԱՁԵՎ---------- 49
ԵՐԳԻ ԾՆՈՒՆԴ ---------- 50
ՓՈՂՈՎ Ո՞ՆՑ ԱՌՆԵՍ ---------- 51
ՓԱԽՍՏԱԿԱՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ------ 52
ԿՅԱՆՔԻ ԳՐԿՈՒՄ ---------- 53
ՍԻՐԱԽՆԴԻՐ ՀԱՅԱՑՔ---------- 54
ՕՐԻՈՐԴԻՆ---------- 55
ՑՆՈՐ ՀԵՔԻԱԹ----------56
ՄՏԱԽՈՀՈՒԹՅՈՒՆ ---------- 57
ԱՆԿՈՉ ՀՅՈՒՐ---------- 58
ԹԻԱՎԱՐՆԵՐԸ---------- 59

ԽՃԵՐԻ ՄԵՋ

ԻՄ ՈՒՂԻՆ---------- 61
ԵՐԳԻ ԱՐՏՈՒՄ ---------- 62
ԵՐԳԵՐ ԵԿՎՈՐՆԵՐԻՆ---------- 63
ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԵՐԳՈՎ ---------- 64
ԲԱՐԵԳՈՒԹԻՆ---------- 65
ԻՄ ԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ ---------- 66
ԿԵՍ ԽՈՍՔ ---------- 67
ԻՆՉ ԱՍԱՑԻՆ ---------- 68
ՀԱԼԱԾԱՆՔ---------- 69
ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ---------- 70
Մի մանկություն անրջանքի,---------71
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԵՔԻԱԹ -------- 72
ԵՍ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՄ---------- 73
ԺՊԻՏ ՀԱՎՈՒՐ ՊԱՏՇԱՃԻ -------- 75
ԱՍԱ ՈՐ ԼՍԵՆ---------- 76
ԲԱՐԵՎՈՎ ---------- 77
ԻՆՉ ԻՄԱՆԱՍ---------- 78
ԱՆՍԱՀՄԱՆԻ ԳՐԿՈՒՄ ----------79
ՄԵՐԺՎԱԾ ՋՈՒԹԱԿ ----------80
ՄԵՆ-ՄԵՆԱԿ ---------- 81
ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ----------82
ԵՐԵԿՈ ԷՐ----------83
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ----------84
ՄԻ ՆԵՏԵՔ ՔԱՐ----------85
ԹԵ...----------87
ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ----------98

ՆՈՐԵՆ ԻՄՆ Է ----------89

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՄ

ՆԱՎԱԿՈՒՄ----------91
ԴԱՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ----------93
ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎ---95
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------98
ԿՈՒԿԻ ԾՈՌԸ----------99
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՒՏՔ----------101
ԿՈՒՌՔԵՐԸ----------102

ԱՇԽԱՐՀԻԿ ԽՈՍՔ

ԽՈՐՀՈՒՐԴ----------105
ՈՒՆԵ՞Մ ԹԵ՞ ՉՈՒՆԵՄ----------106
Ի՞ՆՉ ԱՆԻ----------107
ԶԳԱՍՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ---108
ՈՒՐԵՄՆ ԴԵՄ ԵՄ----------109
ՋԵՐՄԱՏԵՆԴ----------110
ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ---------- 111
ԽՈՒՍԱՓՈՒԿ ---------- 112
ՀԱՍԿԱՑԱՎ ---------- 113
ՄԱՐԴԸ ՄԱՐԴՈՎ ---------- 114
ԴԵՌ ՉՀԱՍՏԱՏՎԱԾ ----------115
Չ Թ Օ ---------- ----------116
ԵՄ ՔԵԶ ՏԵՍԵԼ ԵՄ----------117
ԱՇԽԱՐՀԻԿ ԱԿՆԱՐԿ----------118

ՈՒՐԻՇԻ ԹԵՎՈՎ ---------- 119
ՈՒ՞Ր ԵՆ ԳՈՐԾԵՐԴ ---------- 120
ՄԻԱՄՏՈՒԹՅՈՒՆ---------- 121
ՊՏՈՒՅՏ ---------- 122
ՆՈՒՆՈՒՇԻՆ ---------- 123
ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ---------- 124
ԱՓՍՈ՛Ս ՉԵՄ ԿԱՐՈՂ ---------- 125
ՎԵՐԱՄԲԱՐՁ ԿՌՈՒՆԿ ---------- 126
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ---------- 127
ԱՆԱԿՆԿԱԼ ---------- 128
ՉՄԱՀԱՎԱՆ _ ---------- 129
ԲԵՂԱՏԻՐՈՋ ---------- 130
ԹՄԲԻՐՈՒՄ - , ---------- 131
ԱՉՔԵՐԻՍ ՆԱՅԻՐ----------132
ԱՅՍՊԵՍ ԵՆՔ ԱՊՐՈՒՄ ---------- 133
ԲԱՑԱՍՄԱՆ ՕՐԵՆՔՈՎ ---------- 134
ԹԵ ՈՐ ՉՋՈԿԵՄ ---------- 136
ԵՐԿՈՏԱՆԻ ԳԻՇԱԿԵՐԸ ---------- 137
«ԱՍՏՂԱՅԻՆ ---
- ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ»---------- 138
ՄՆԱՍ ՀԵՌՈՒ ---------- 139
ԵՂԵԼ, ՉԻ ԵՂԵԼ ---------- 140
ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ ---------- 141
ԴԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆ ---------- 142
ՑԱՎ ---------- 143
ՖՈՒՏԲՈԼ. ---------- 144
ԻՆՁ ԿԱՐԹՆԱՑՆԵՍ---------- 145
ԷԼ ՉԵՄ ՀԱՄՏԵՍԻ ---------- 146

ՀՅՈՒՐ ԷԻ ՄԻ ՕՐ ---------- 147
ԹԵ ՉՈՒՆԵՆԱՍ---------- 148
Ի՜ՆՉ ՍՊԱՍԵԷ ---------- 149
ՍԻՐՈ ԱՌԵՎՏՈՒՐ ---------- 150
ՏԻԿԻՆ ՄԱՆՐԷԱԿԵՐ ---------- 151
ԾՈՒԽ ԱՄՊԵՐ----------152
ԳՈՅԱՊԱՅՔԱՐ ---------- 153
ԿԼԻՆԵ՞Ս ԺՈՒԺԿԱԼ ---------- 156
ՊԱՀՄՏՈՑԻ ---------- 157
ԱՓՍՈՍ----------158
ՋՐՀԵՂԵՂ ----------159
ՕԼԻՄՊԻԱԴԱ----------160
ԹԵ ՈՐ ՃԱՀԻՃ...----------161

ՄՈՍԿՈՎՅԱՆ ԽՃԱՆԿԱՐ

ՄՈՍԿՎԱՅԻՆ----------164
ՉԵՄ ՑԱՆԿԱՆՈՒՄ---------- 166
ՄՈՍԿՈՎՅԱՆ ԽՐՈՆԻԿԱ----------167
ՔԱՎՈՒԹՅԱՆ ՆՈԽԱՋ---------- 168
ԱՅՍ ԵՐԿՐՈՒՄ----------169
ԹՈՀՈՒԲՈՀՈՒՄ----------170
ԿԱՊԻՏԱՆ ՎՈԼԿՈՎ----------171
ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ----------172
ԲԱՐՔԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐ----------173
ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ----------174
ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ----------176
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ----------177

ՉԷ, ՉՀԱՍՏԱՏՎԵՑ----------178
ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ---
-ՈԼՈՐԱՆՆԵՐՈՒՄ---------- 179
ԻՆՉԵ՛Ր, ԻՆՉԵ՛Ր----------181
ՊՏՏԱՀՈՂՄ----------182

ԱՎԵՏԻՍ ԵՐԿՆԻՑ

ԱՍՏՂԵՐԻՑ ԱՆԴԻՆ----------185
Ո՞Վ Է ՍՏԵՂԾՈՂԸ----------186
ՄԻ ՓՈՐԱՉԱՓ ԽՈՍՔ----------187
ՄԱՐԴՈՎ ՄԱՐԴՈՒՆ----------188
ՈՒ՞Ր ԷԻ----------189
ԱՎԵՏԻՍ----------190
ՆՈՐԱՑՎԱԾ ՀԻՆԸ----------191
ԱՐԺԵ ԱՊՐԵԼ----------192
ԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՋԱՆՈՒՄ---193
ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ----------194

Գրական-գեղարվեստական հրատարակություն
Հենրիկ Շմավոնի Օհանյան

ԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱԶԱՆՈՒՄ

Բանաստեղծություններ

Խմբագիր Ս. Ասլիկյան
Սրբագրիչ Ս. Ասլիկյան
Ե. Ղազարյան

«Պրոգրես» հրատարակչություն
Մոսկվա 2010

Генрих Шмавонович Оганян

ЕРАНУТЯН АВАЗАНУМ

Стихи

Редактор С. Асликян
Корректор С. Асликян

Издательство «Прогресс»
Москва 2010
Тип. ВТИ Зак. 441